Azg

Azg armenian daily

13 ՅՈՒԼԻՍ 1995. ՇԱԲԱԹ # 132 (886)

Ալիեւը Նախիջեւանը հանձնում է Չիլլերին

Հուլիսի 11-ին Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը Բաքվում գտնվող Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլլերին առաջարկեց, որ Թուրքիան ստանձնի Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության պաշտպանությունը: Ալիեւն ասել է, որ իրենք հայկական շրջափակման պատճառով չեն կարողանում կապվել Նախիջեւանի հետ: «Նախիջեւանը կառավարելու եւ նրա պաշտպանությունը ստանձնելու գործը հանձնում եմ ձեզ», ասել է նա: Չիլլերն ընդունել է այդ առաջարկը եւ հայտարարել, որ ամեն ինչ կարվի, որպեսզի Նախիջեւանն էլ ավելի զարգանա: Այս օրերով դիտորդները նշում են, որ Թուրքիան Կարսի եւ Մոսկվայի համաձայնագրերով Նախիջեւանի համար Ռուսաստանի հետ համատեղ երաշխավոր երկիր է համարվում եւ հայտնի չէ, թե Ռուսաստանն ինչպիսի հակազդեցություն ցույց կտա Ալիեւի առաջարկին: Ըստ «Մարմարա» թերթի, Չիլլերին մոտ կանգնած շրջանակներն այն կարծիքն են հայտնել, որ Ալիեւի խոսքերն ուժի մեջ են, հանի դեռ Նախիջեւանը հայկական շրջափակման մեջ է: Կնկատել է համաձայնագիր հայկական գրավման տակ գտնվող Ադրբեջանի եւ Նախիջեւանի միջեւ գտնվող երկաթուղին վերագործարկելու մասին:

ԵՏ

ԸՆՏՐԱԿԱՆ ՔԵՂԾՈՒՄՆԵՐ

Գոնե ճիշտ հաշվեին...

Դանդաղելի, համամասնական ու մեծամասնական ընտրությունների արդյունքներն ամենուն շատ եւ հաճախ են պնդեցրել ընտրական հանձնաժողովի խոհանոցում «ճշգրտումների» նկարագիրը, որ հակառակ ԿԸՀ-ի տրամադրության տակ գտնվող եզոր համակարգիչների առկայության, «ճշգրտումները» չեն կարողացել, գոցն շտապելով, «կարգի բերել» բոլոր թվերը, համապատասխանեցնել գումարները: Աղյուսակում ստացվել է անհեթեթ մի պատկեր, որը կոչվում է ընտրությունների արդյունք, որով կոնակցությունները ստանում կամ չեն ստանում (ան)համապատասխան տեղեր: Այս, այս անգամ խոսքը վերաբերում է համամասնական ընտրություններին: Մեր Աեռքի տակ եղած մի շարք վիճակներից առանձնացնում ենք ընտրանին մեկը՝ մայրաքաղաքի թիվ 11 ընտրատարածքինը ԿԸՀ-ի համակարգչից դուրս եկած վիճակով, կիրակի, հուլիսի 9-ի գիշերվա դրությամբ, երբ մեր ոլեսական ուրեմի Աեռքի տակ կային արդեն համամասնական ընտրությունների «վերջնական» արդյունքները: Այս վիճաբերությամբ ոչնչ է ուշադրություն դարձնել միայն 4 բնակատների վրա՝ գրանցված քվեաթերթիկների թվի, վավեր ձայների գումարի եւ կուսակցությունների ստացած կողմ ձայների գումարի վրա: Այդ երկու գումարները ոչնչ է հավասար լինեն, այնինչ... Եւ պատկերացնել, որ մինչեւ ԿԸՀ հասնելը այդ տվյալները տեղերում ինչպիսի «Աեռավարման» են ենթարկվել:

Համամասնական ընտրական համակարգ
Ընտրատարածք թիվ 11 ըստ 8 տեղամասերի

1. Ընտրատարածքում ստացած քվեաթերթիկների թիվը	12670
2. Սարված քվեաթերթիկների թիվը	6293
4. Ընտրողների ընդհանուր թիվը	13444
5. Գրանցված ընտրողների թիվը	6414
6. Չօգտագործված վկայականների թիվը	5530
Թիվ 70 տեղամաս	1050
Թիվ 71 տեղամաս	645
Թիվ 72 տեղամաս	1138
Թիվ 73 տեղամաս	0
Թիվ 74 տեղամաս	1138
Թիվ 75 տեղամաս	1047
Թիվ 76 տեղամաս	268
Թիվ 1592 տեղամաս	244
7. Քվեաթերթիկների ընդհանուր թիվը	6433
8. Անվավեր քվեաթերթիկների թիվը	5231
9. Վավեր քվեաթերթիկների թիվը	1202

Կողմ ձայների թիվը

Կազմակերպության (միավորման) անվանումը	Ձայների թիվը
1. Ազգային ժողովրդավարական միություն	1057
2. Ազգային ինքնորոշում միավորում	351
3. Ազգային ոգեություն	140
4. Աստվածություն	13
5. Ժողովրդական կազմակերպություն	23
6. «Կամք» միություն եւ Հայ դաշնակցություն կուսակցություն	99
7. Հայաստանի ազգային ժողովրդավարական կուսակցություն	57
8. Հայաստանի գիտաշխ. եւ բարեգործական միություն	336
9. Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	171
10. Հայաստանի կոմունիստական կուսակցություն	579
11. Հայաստանի ռամկավար ազատական կուսակցություն	298
12. «Հանրապետություն» միավորում	840
13. Շամիրամ	313
Գումար	4277

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀՈԱԿ-ը չորեքշաբթի հետ հաջողության ճանապարհը, այն կդիմազրկեր նրան»

ՍՈՒՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ.

Անկախ ամեն ինչից. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն արդեն իրականություն է. ՀՀ Ազգային ժողովը գրեթե ընտրված հասատված է 70 մանդատ. բաշխված է համամասնականի 40 մանդատ: Ինչպես տեղեկացրել ենք մեր նախորդ համարում, համամասնականի ցուցակի վերաբերյալ անհամաձայնություններ շատ լին եւ այդ մասին բարձրաձայն արտահայտեցին Կենտրոնական ընտրական հանձնաժողովում: Ի հավաստումն ճշմարտության, ԿԸՀ-ի նախագահի տեղակալ Գ. Ջիանգիրյանը հայտնեց, որ թվերը հաշվարկելիս համակարգչի աշխատանքին հետեւել են նաեւ միջազգային դիտորդներ: Միայն այսքանը. իսկ մենք մի քանի օրինակ բերենք ոչ թե անմիջականորեն տեղամասերից ստացված մեր արդյունքներից, այլ հենց ԿԸՀ-ի ունեցած թվերից: Թիվ 11 ընտրատարածքի որ տեղամասերից ԿԸՀ է ուղարկվել համամասնականի 1202 քվեաթերթիկ. սակայն վերջնահաշվարկում այն դարձել է 4277: Թիվ 84 ընտրատարածքի տասնչորս տեղամասերից ուղարկված տույն քվեաթերթիկների քանակը կազմել է 2295. իսկ հաշվարկի վերջում 3715: Հակառակ դրա՝ կա՝ 52 ընտրատարածքի ինը տեղամասերից ստացվել է 3271 քվեաթերթիկ. իսկ հետո այն իջեցվել է 2591-ի եւ այլն: Մեկ այլ փաստարկ. որի մասին արդեն հրապարակել ենք Կրասնոսելսկի շրջանի Աղբերք գյուղը եզակի չէ. որտեղ բոլոր քվեարկողները միաձայն նույն վերաբերմունքն են արտահայտել հանրաքվեի եւ երկու քվեաթերթիկների վերաբերյալ: Օրինակներ բազում են, սակայն հետաքրքրական նշված թվերի անհամապատասխանությունն է, որի վերացումները բացառիկ ճշմարտությամբ անուն վաստակած միջազգային դիտորդներն են: Ինչպես, մեզանում մեկ անգամ հաստատվածը այլեւս անհաստատ չի դառնում, համամասնականի ցուցակում ընդգրկված 5 կուսակցությունների թիվն այլեւս 6 չի դառնա: Առաջին երկու օրերին նույն ԿԸՀ-ն համամասնական ցուցակի մասին հիշելիս ՀՌԱԿ-ին 4-րդ տեղն էր վերագրում: Պետական ռադիոն 6.3 տոկոս արդյունք հրապարակեց: Սակայն երբ Սահմանադրության հետ «հաշիվներ» փակվեցին, եւ ավելի որոշակիորեն սկսեցին գրադվել համամասնականի արդյունքներով, նշված թիվը կտրուկ նվազեց 2.59 տոկոս: Ընդամենը մեկ դժգոհություն եւ այն նվազեց ևս յոթ հարյուրերորդականով: Այսինքն. ընդամենը 52 հարյուրերորդականով ավելի համամասնական ցուցակի 13-ի շարքում դիրքավորված «Կամք» անունը կրող եւ իրեն Հայ դաշնակցության մասնիկը ավելացրած ինչ որ ան հայտ կուսակցությունից եւ 15 տոկոսով դրակաս 1.5 ամսվա դրամագրություն ունեցող «Շամիրամից», որը 16.88 տոկոսի բարձունքն է նվաճել:

Ասվածի վերաբերյալ ՀՌԱԿ վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանի տեսակետն այն է, որ նախընտրական քարոզչությունով կուսակցությունը հաղթահարել է 5 տոկոսի սահմանը: Եւ եթե ընտրության արդյունքներ ճիշտ ցույց տային, ՀՌԱԿ-ն Ազգային ժողովում կունենար որոշակի տեղ: Դեռեւ ի հարկե հաղթանակած կուսակցության տեղատեր չէին, սակայն նրա կայուն զարգացման փուլում բավարար էին այն առումով, որ այս փուլում ՀՌԱԿ-ը հրաժարվեց քարոզչության ոչ ոչ հանրական մերոդներից:

«Երկրորդ հաջողության հետեւանքներ հետաքրքիր էր. չմասնակցելը ՀՀՀ-ի գլխավորած բլոկին. ինչը կդիմազրկեր նրան», ասաց Ռ. Միրզախանյանը:

Տես էջ 2

Սերբերը դուրս չեն գալիս Սրեբրենիցայից

Սերբիայի նախագահ Ռադովան Կարաջիչ դեմ է Սրեբրենիցայից սերբական զորքերի ստորաբաժանումները դուրս բերելու ՄԱԿ-ի դեկավարության պահանջներին: Այդ իսկ պատճառով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին 300 միլիոն ամերիկյան դոլար է հատկացրել արագ կողմնորոշման ուժերին տարածաշրջան ուղարկելու համար: Ֆրանսիական իշխանությունները նույնպես իրենց պատասխանությունն են հայտնել «խաղաղությունը վերահաստատելու», Բոսնիա համաձայնությունը հանկի գինում գործադրելու: Ռուսական իշխանությունները անարդարացի են համարում ՆԱՏՕ-ի օդուժի կողմից սերբական դիրքերի ռմբակոծումը, հանի որ, ըստ նրանց, ռմբակոծության ժամանակ կարող էին տուժել այդ շրջանում տեղակայված «կաղույս սաղավարտավորները»:

«Մինսկյան համանախագահները» Բաքվում

12 ՀՈՒԼԻՍ. ԼՈՅՅԱՆ. ՏԻՊԱՆ. Հոյի սի 12-ին Բաքու ժամանեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի Ռուսաստանի եւ Ֆինլանդիայի համանախագահները: Այցի արդյունքներ ամփոփվելու են հուլիսի 24-27-ին Բաղենում (Ավստրիա), Մինսկի խմբի խորհրդաժողովների ընթացքում: Ռուսաստանի ԱԳՆ-ի ներկայացուցիչ ասաց, թե ռազմական դիմակայության դադարեցման հարաբերական համաձայնագրի տեսքի համաձայնեցման շուրջ հայ-ադրբեջանական բանակցությունների ԵԱՀԿ-ի միջնորդությամբ անցնող հերթական փուլը կարանալու է Մոսկվայում, օգոստոսի վերջին. սեպտեմբերի սկզբին: Բաքու այցելելուց հետո Ռուսաստանի եւ Ֆինլանդիայի ներկայացուցիչները կայցելեն նաեւ Երեւան եւ Ստեփանակերտ:

Ժակ Շիրակի թուրանդաստ ելույթը

Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը Եվրախորհրդարանի Ստրասբուրգում տեղի ունեցած նստաշրջանում անդրադառնալով Եվրախորհրդարան-Թուրքիա հարաբերություններին՝ ասաց. «Եվրախորհրդարանը եւ Ֆրանսիան դարաստոր են դարձնել Եվրոպական մասային դարմանագրին եւ Եվրոպական միությանը անդամագրվելու Թուրքիայի ձգտումները: Թուրքիան նախկին արտաքին մահմեդական նությամբ տարաղող երկիր չէ: Այն դարձել է ժամանակակից ժողովրդավարական երկիր, որ ուշադրություն է նվիրվում մարդու իրավունքների հարցերին: Թուրքիան ընդունում է ազատ տվյալական հարաբերությունների ոլորտով եւ այդ ուղղությամբ գործադրում է եվրոպական բոլոր չափանիշները»:

Ա. Ս.

Ելցինի առողջական վիճակը՝ քարոզ

ՄՈՍԿՎԱ. 12 ՀՈՒԼԻՍ. ԻՄԱՊՐԵՍՆԱՐՔ. Կենտրոնական կլինիկական հիվանդանոցից նախագահ Բորիս Ելցինին բուժող բժիշկները հաղորդեցին, որ «հիվանդը հանգիստ է անցկացրել գիշերը. ընկել է նորմալ տրի ցավեր չեն տրձանագրվել», ասվում է նախագահի մամլո ծառայությունից ՌԻԱ-Նովոստիի ստացված տեղեկատվության մեջ: «Այսօր առավոտյան Ելցինի զարկերակային ճնշման ցուցանիշները եղել են կանոնավոր եւ կայուն. Լեկտրակարդիոգրամմայի տվյալները նույնպես: Այժմ նա կատարում է բժիշկների նշանակած բոլոր բուժզննումները», հաղորդում է մամլո ծառայությունը:

Տես նաեւ էջ 8

ԵՐԵՎԱՆ

Գիլմոր. «Անպատեպի էր «Շամիրամի» հաջողությանը, զարմանալի էր ՀՈԱԿ-ի ձախողությունը»

ԵՐԵՎԱՆ, 11 ՀՈՒԼԻՍ, ՓՍՍ: Վեց-յոթ օրից Հայաստանին հրաժեշտ է տալու այսօր ԱՄՆ-ի առաջին արտակարգ եւ լիազոր դեսպան Հարի Գիլմորը: Այդ առթիվ նա հուլիսի 11-ին հայկական լրատվական միջոցների ներկայացուցիչներին հրաժեշտի ճաշկերույթի էր հրավիրել «Արմենիա» հյուրանոցային հսկայի ռեստորանում: Ողջունելով հյուրերին, դեսպանն ընդգծեց, որ այս հրավերը նոստակ ունի փաստելու այն մեծ կարեւորությունը, որ իր երկիրը վերագրահում է մամուլին: Փոխադարձ սիրալիր խոսքերից հետո հավաքվածներն հասկանալիորեն հիմնականում կենտրոնացան օրերս Հայաստանում անցած ընտրությունների եւ հանրաքվեի մասնամասների վրա: Գիլմորն ընդգծեց, որ դեսի է հասակ գիտակցել այն իրողությունը, որ ամբողջաստիությունից անմի ջապես հնարավոր չէ անցում կատարել ժողովրդավարությանը: Միաժամանակ, ըստ դեսպանի, ընտրությունների արդյունքներն ընդհանուր առմամբ հնարավոր էր կանխատեսել, բացառությամբ «Շամիրամի» հաջողության, որն իրոք անսպասելի էր: Ըստ որմ. Գիլմորի, բավականին զարմանալի էր նաեւ այն, որ նախնական տվյալներով Ռամկավար ազատական կուսակցությունը չի հաղթահարել համամասնական ընտրությունների 5 տոկոսանոց արգելքը: Հարի Գիլմորը չի դադարեցնում շարունակել իր ուսանողական դիվանագիտական գործունեությունը: Նրան տպասում է Միջազգային հարաբերությունների կենտրոնի նորանկախ գեսությունների խորհրդի կուլտեսի դեկանի դաշտոնը:

Ելցինը Կովկասի դեկավարներին հրավիրում է խորհրդաժողովի

Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը Ռուսաստանի Հյուսիսային Կովկասի եւ Անդրկովկասի հանրապետությունների դեկավարներին առաջարկում է սեպտեմբերին հավաքվել խորհրդաժողովի դարձանավարվելու դոր Կովկասի համար հրատարակ հնարավորությունների շուրջ: Այս մասին հուլիսի 12-ին Թբիլիսիում հայտնել է ՌԴ Դաղեստանի խորհրդի նախագահ Վլադիմիր Շամսկին Վրաստանի վարչապետ Օրար Պատցացիայի եւ այդ հանրապետության կրթամշակութային անդամների հետ հանդիպմանը: Վ. Շամսկին գլխավորում է Ռուսաստանի խորհրդարանի վերին պալատի դաշտային հարցերի գրասենյակը:

տեղական

ԱՆԳԱՔԱՐՁ

Նախընտրական շեմք

Ըստ նախնական տվյալների, մայրաքաղաքում բնակչության 65 տոկոսը դեմ էր քվեարկել Սահմանադրությանը (տարբեր ընտրատարածքներում այդ թիվը տարբեր էր, բայց հիմնականում նվազածից բարձր): Ստացվում է, որ դալատական մտավորականության ողջ դերձախսությունը ի զորու չեղավ սդալել մարդկանց ուղեղը. ավելին, հակառակ ազդեցությունն ունեցավ, իսկ «ծննդյան տոնից» առաջ ընկած համերգ հրավառությունը հավանաբար ավելի շատ հակադրվելու ցանկություն առաջացրեց: Ստացվում է, որ անլուսյա, անջուր, անաշխատավարձ երեւանցին եւս 5 կամ 10 տարի (մեր փոսոաղանձ Սահմանադրության ընդունումից հետո նախագահը, անշուշտ, կօգտագործի եւս երկու անգամ ընտրվելու իր իրավունքը) դատապարտ է անլուսյա, անջուր, անաշխատավարձ մնալ, անկախ նրանից, որ Սահմանադրությունը այսպես թե այնպես շրմփացրին իր դեմքին: Ինչ վերաբերում է հանրաքվեության շրջանների բնակչությանը, ապա, ամենայն հավանականությամբ, «այո»-ն սարքվեց նրանց հաշվին, իսկ եթե բացթողումներ էլ եղան, ապա ԿԸՀ-ն ավելին աշխատեց, բայց չնահանջեց:

Իսկ ի՞նչ շահեց նույն մտավորականությունը: «Հանրաքվեություն» միավորման ցուցակում այլի են զարնում հակառակ հանրաքվեության բուհերի ռեկտորների, գիտությունների ակադեմիայի եւ արվեստի ակադեմիայի այլի ընկնող եւ բարձր դասերն զբաղեցնող ներկայացուցիչների անունները: Ինչո՞ւ նրանք շահեցան փայլն ապահովելով փոխադարձ վերաբերմունքի չարժանացան, ինչին որ «բանս ունեցան» արժանանալու «կարկառուն» քաղաքական այրեր: Ասենք հուլիսի 5-ին իրենց ընտրատարածքներում համադասական հենարանի, «քաջարի» տղերքի եւ զորագնդերի ապահովումը: Այդ դեպքում նրանց ինչի՞ն էր պետք սեփական անունը «Հանրաքվեություն» միավորման ցուցակում 80-րդ տասնյակից հետո ունենալը: Իսկ միգուցե դա մինչ այդ ձեռք բերածն ապահովագրելու, «Միայն այո» ծրագրի ժամանակ տիրական կեցվածքով բազմած այրերին (հիշողությունը նենգ է եւ լուսապատկերում է, որ տարիներ առաջ վերջին ներս բոլորովին էլ-ոչ կոսյումներով խորհրդային նոյեմբերի 7-ի տոնական տարությունն ընդհատեցին «նոյեմբերի յոթն ու քառասունը մեկ արեցինք» ծաղրով) թիկունք ունենալու ցանկություն էր: Նույնը եւ մինչեւ հանրաքվեն «Հայաստանի Հանրապետություն» բերքի առաջին էջի աջակողմյան սյունակները զբաղեցնողները: Միգուցե ոմանց համար մեդալի մյուս երեսը «ժողովուրդ» անունով, կարելոր չէ, բայց նրանցից մի քանիսը մինչ այսօր եւ սրանից հետո ակնկալելու են նրա արձագանքը եւ հավակնություն ունեին հավասի մարմնացում լինելու: Բայց մտավորականությանը վարկաբեկելու ոչ առաջին անգամ խաղացվող խաղը նորից հաջողությամբ գործեց:

Ի դեպ, որպես հետգրություն, ուզում եմ նշել, որ նշված բերքի սյունակներում հայտնված որոշ անուններ անակնկալ են եղել հենց իրենց «հարազատույց» տվողների համար: Ասենք՝ Հենրիկ էդոյան, Ֆրունզե Դովլաթյան... Ոտի վրա կարծիք հավաքելու եւ «բան» սարքելու լուսագական քանվայել պրակտիկան է գործել: Ֆրունզե Դովլաթյանի հերքումը նույն օրը եթերից հնչեցրել է Պարույր Հայրիկյանը, հանրահավաքում Արամ Սարգսյանը: Ցավալի է, որ «Ազգը» հուլիսի 5-ին համար չունենալով, չի կարողացել նույնը անել:

ԱՐԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ

■ *Սահմանադիր տուկան գործում է: Երկու ամիս ընդհատումից հետո նորից սկսեց գործել Մեղրու շրջանի Ազատուկ գյուղի տարածքում գտնվող հայխոսնական սահմանադիր տուկան: Բացի մանրածախ ու մեծածախ առեւտրից, այստեղ նաեւ նոտարական պաշտոններ են ընդունվում: Տուկան աշխատում է շաբաթվա բոլոր օրերին:*

Արմենպրես

«Համարել այս ֆարսը հանրաքվե կամ ընտրություններ, շատ դժվար է», այս գնահատականով սկսեց ընդդիմադիր կուսակցությունների ղեկավարների հրավիրած մամուլի ասուլիսը դեմոկրատների առաջնորդ Արամ Սարգսյանը: Ընտրություններից հետո Հայաստանում ստեղծվել է նոր քաղաքական իրավիճակ եւ բնականաբար ընդդիմության առջեւ նոր խնդիրներ են դնում: Բայց առայժմ, չմոռանալով

ԵՐԵՎԱՆ

«Ընդդիմությունը երաշխիքներ չունի»

«Սահմանադրությանն «այո» է ասել 21 տոկոսը»

գործողությունների հաստատված ծրագիր, ընդդիմադիր ուժերը բավարարվում են միայն նախընտրական դաշտարի, հանրաքվեի ու ընտրությունների ընթացքի գնահատականներով: Նշելով, որ ընտրությունները անցկացվել են խախտումներով, Արամ Սարգսյանն ասաց, թե Հայաստանում բոնատեսության միտումներ հաստատված են: Արշակ Սադոյանը իր հերթին նշեց, որ բացառիկ ակտիվությամբ մասնակցելով հանրաքվեին եւ ընտրություններին, ժողովուրդը ասել է «ոչ» Սահմանադրությանը:

Դրա ասելով, բոլոր աղբյուրներից ստացված փաստական տվյալները ամբողջացնելով, կարելի է հայտարարել, թե ԿԸՀ-ի կողմից հուլիսի 7-ին հրապարակված հանրաքվեի արդյունքները իրավական ուժ չունեն եւ կեղծ են: Այդ կապակցությամբ Արշակ Սադոյանը նշեց 4 կետ: Նախ, հանրաքվեի մասին օրենքի 38-րդ հոդվածը խախտելով, 2 ժամով երկարաձգվել է հանրաքվեն, որի ընթացքում մասնակիցների քանակը արհեստականորեն ավելացվել է: Ընդ որում, եթե դա բոլորվում էր ընտրությունների մասին օրենքով, ապա հանրաքվեի մասին օրենքով չէր բոլորվում: Երկրորդն այն է, որ որոշ Սմիրյանի կողմից դեռ հանրաքվեի նախօրեին հայտարարվել էր մասնակիցների մոտ 2.370.000 թիվը, բայց հուլիսի 7-ին հայտարարվել է մոտ 2 մլն. 189.000, որը 190 հազարով պակաս է նախկինից: Երրորդ, բացահայտորեն կեղծվել է Սահմանադրությանը «այո» քվեարկողների քանակը, այն ավելացվել է շուրջ 2 անգամ, իսկ «ոչ» ասողներինը 1.5 անգամ նվազեցվել: Կեղծվել է նաեւ չօգտագործված եւ անվավեր ճանաչված քվեաթերթիկ:

Ամենաշատ զարմանալի է, որ ինքնակոչ դիտորդներ ներգրավելով, ապա այս հարցը կդառնա միջազգային քննարկման առարկա»: Նրա կարծիքով, եթե դա իրականացվի, ապա «խնդրահարույց բոնատեսությունը չի դիմանա»:

Ընդդիմադիր ղեկավարները չդատապարտեցին այն հարցին, թե ինչ գործողությունների են նախապատրաստվում: Նշելով, որ այդ հարցը դեռեւս պետք է քննարկվի ընդդիմադիր բլոկի խորհրդի նիստում:

Մեր այն հարցին, թե որն է ընդդիմության բույլ տված ամենամեծ սխալը ընտրադաշտարի ընթացքում եւ որքանով են դատեր, ընդդիմադիրները տվեցին ոչ ամբողջական դատապարտում, իսկ մի հանիսը նույնիսկ նշեցին, թե իրենց գնահատականները տարբերվում են: Մասնավորապես, Ալբերտ Բաղդասարյանը նշեց, թե հիմնական սխալն այն է, որ ընդդիմությունը ժամանակին եւ տեղին քայլեր չձեռնարկեց, եւ միասնական նախընտրական ճակատ չկազմեց:

Արշակ Սադոյանը բացատրեց, որ իմանալով հանդերձ, թե իշխանություններն ամեն ինչ անում էին ժողովրդավարական գործընթացը ուժային հարթություն տեղափոխելու համար, ընդդիմությունը ուժին ուժ հակադրելու վճռականություն չունեցավ: Սամվել Շահինյանը մի այլ հարթություն տեղափոխեց խոսակցությունը եւ հայտարարեց, որ ընդդիմությունն, որպես այդպիսին, Հայաստանում երբեմ չի եղել, եւ առաջիկա 3-4 տարում չի լինի: Իսկ Պարույր Հայրիկյանն ուղղակի մեջբերեց ժողովրդի ծոցից նյութ մի քաղաքացու խոսքերը, որը մոտենալով նրան ասել է. «Ընդդիմությունը ոչ թե իրեմ են, այլ ողջ ժողովուրդը»:

ՏԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀՈԱԿ-ը չորոշեցրեց հետո հաջողության ճանապարհը...»

Սկիզբը էջ 1

Իսկանն այն է, որ անկախ Հայաստանի կազմավորվող երկրորդ խորհրդարանի մաս չկազմեցին մենդարյա փորձություն ունեցող երկու դասական կուսակցություններ՝ ՀՈԱԿ-ը եւ ՀՅԴ-ն: Վերջինիս վերաբերյալ իրենց կարծիքներում միջազգային դիտորդներն ափսոսանք էին հայտնում, որ ժողովուրդն իր վերաբերմունքը չկարողացավ արտահայտել ընդդիմադիր կարեւորագույն քաղաքական կուսակցություններից մեկի նկատմամբ: Իսկ ժողովուրդն իր բողոքն արտահայտելու ձեւ գտավ՝ համամասնական քվեաթերթիկներից շատերն անվավեր էին համարվում այն դատճառով, որ նրանցում ջնջել էին բոլոր կուսակցություններին եւ տողատակում ավելացրել՝ ՀՅԴ: Մյուսին՝ ՀՈԱԿ-ին թույլատրեցին տեղ գտավել դատվելիների շարքում, նույնիսկ որոշակի «ոկոս հատկացրին, իսկ հետո... թերեւս զղջացին: Ինչ արած, «զառամյալ ծերունի ներին» չեն սիրում, հրադարակի վրա են նորերը՝ նոր Հայ դաշնակցություն, ՈԱ(ԼՂ)Կ, «Շամիրամ», «Առաքելություն», ժողովրդավարական կազմակերպություն եւ այլն, եւ այլն: Այդ կազմակերպությամբ զբաղ. Միրզախանյանը հայտնեց, «Փոխարինելու մեքոդը կարող է միայն ինչ-որ մի ժամանակահատվածում «արդյունք» տալ, որեւէ խնդիր լուծելու համար: Իսկ իրական փոխարինումն անհնարին է, որովհետեւ ազգային կուսակցությունները հայ ժողովրդի խառնվածքն են արտահայտում: Կարող է տվյալ կուսակցության անդամ չլինել, սակայն դա նրա աջակցությունն է»: Իսկ ո՞րն է վերը քվեարկվածների գաղափարախոսությունը: Իսկապես իշխանությունների համար դրանք հազարերորդական բաներ են, օգտագործվել են մի կարճ ժամանակահատվածում, իսկ հետո մոռացության մատնվել, ինչպես ՀՅՀԴ-ն: Իհարկե, Ազգային ժողովը դեռեւս լիովին կազմավորված չէ եւ հնարավոր է, որ 2-3 տեղ ունենան նաեւ ՀՈԱԿ-ն ու ՀՅԴ-ն: Սակայն դրանից դժվար թե Ազգային ժողովը որակական փոփոխություն կրի: Իսկ կուսակցությունները անդայմանորեն կկրեն: Ինչպես տեղ կացրեց ՀՈԱԿ ատենապետը, կուսակցության շարքերը շուտով կիամալրվեն շուրջ հազար անդամով եւ այնման բնական ճանապարհով, ինչպես երբեմ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ճահճից դուրս գալու համար նոր սերո՞ւնդ է պետք

Արմատական ընդդիմության առաջնորդներից Արամ Սարգսյանը, հուլիսի 12-ին կայացած մամուլի ասուլիսում բարձր գնահատելով «Համագործակցությանն...» կազմակերպությունների նախընտրական ժամանակահատվածի գործունեությունը, այնուամենայնիվ, հոյանցիկ անդրադարձավ նաեւ բույլ տված սխալներին, որոնցից առանձնացրեց քաղաքական կազմակերպությունների ուշացած համագործակցության փաստը: Թեեւ այդ բացթողումը նա հիմնավորեց նրանով, որ ի տարբերություն «Հանրապետություն» միավորման կազմում գրանցված կազմակերպությունների, ընդդիմադիր ուժերն անհամեմատ սկզբունքային են, բայց եւ այնպես փաստն այն է, որ «արմատականների» մասնատվածությունը ներկայումս արդեն դատապարտում է նաեւ բնակչությունը: Այնուամենայնիվ, որքանո՞վ է ճիշտ նման հարցադրումը. վերջ ի վերջո հարկ է ընդունել, որ ընդդիմությունն այն ուժը չի եղել, որը նույնիսկ անվերեղ եւ միահամուռ գործելակերպի պայմաններում ի զորու լիներ կանխարգելել բոլոր օրինախախտումները, տանել իր ետեւից բնազդաղաչտ դարձած ժողովրդին ու բախտորոշ կերպով ազդել ընտրությունների եւ հանրաքվեի արդյունքների վրա: Այն պահից ի վեր, երբ իշխանությունների թեթեւ ձեռքի կողմից բռունցքով, ողջ հանրապետությունը վերածվեց նյութական եւ բարոյական տնտեսածառի, արդեն պարզ էին արդյունքները: Բանն այն է, որ ընդդիմությունն անգամ մեծ ցանկության դեպքում անկարող է ճահիճը դարձնել մարգագետին: Դա ժամանակի խնդիր է, ու հարցը դիտելով նման հարթության վրա, միանշանակորեն հարկ է խոստովանել, որ ոչ մի արտասովոր բան չի կատարվել: Ընդդիմությունը չի պարտվել, եւ «Հանրապետությունը» չի հաղթել. պարզապես ճահիճում մնար պայքար լինել չէր կարող: Դա ավելի քան բնական է, եւ ընտրությունները սոսկ լրացուցիչ խոնավություն էին: Այս պատագայում առնվազն լուրջ բան չէ ինչ-որ պարտությունների կամ հաղթանակների մասին խոսելը: Թե իշխանությունների եւ թե ընդդիմության բացթողումները եւ ձեռքբերումները գործնականում հավասարակշռվում են «անցումային ժամանակաշրջան» կոչեցյալ բեմահարթակով, որի վարագույրից անդին իշխանավորների ձեռքերով էլ հենց կատարվում են բոլոր անօրինականությունները: Այդուհանդերձ իշխանությունն այսօր հզոր է. նրան են ծառայում հանրապետության չորս հիմնական սյուները՝ ֆինանսները, դատական մարմինները, բանակը եւ ներքին զորքերը:

Մինչդեռ ընդդիմությունը սահմանված է որոնել պայքարի նոր ուղիներ: Բացառված չէ, որ կարող է ձեւավորվել նոր սերունդ, որը եւ պետք է լինի ավելի սկզբունքային, ոչ պատվամոլ եւ իրապաշտ: Այժմ, հավանաբար, Վազգեն Մանուկյանի, Ազոն Մանուչարյանի, գուցեեւ եւս 1-2 ընդդիմախոսի բացառությամբ, իշխանությունները չունեն ուրիշ լուրջ հակառակորդ: Այս տեսանկյունից հուլիսի 12-ի ասուլիսը դրա առաջացյալ է. համամասնական ընտրություններում ձայների 5 տոկոսի սահմանագիծը հասած կուսակցությունների ներկայացուցիչներն առավելաբար խոսում էին սոսկ հանրաքվեի ընթացքում ի հայտ եկած օրինախախտումների մասին:

Ինչ վերաբերում է ոչ արմատական ընդդիմությանը, ապա այն ամենայն հավանականությամբ կշարունակի խաղալ իր դրվագային դերը քաղաքական բեմի վրա: Ինչեւէ, ընդդիմությունը ավարտվեց, ընտրությունները կիսով չափ կայացան: Վարագույրը բացվել է երկրորդ արարածի ակնկալիքներով:

ԱՐԻՍ ԴԱՎԻԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Ո՞վ կբռնի շարագործ ձեռքը

Երեւան-Գյումրի էլեկտրագնացք

Երբ մի քանի տարի առաջ Հայաստանի երկաթուղային վագոնների լուսամուտների առակիները շար ձեռքով կոտրվում էին հարեւան հանրապետության տարածքով անցնելիս, ապա որոշ ժամանակից ի վեր նույնն արվում է հենց մեր իսկ ձեռքով: Անցյալ տարի «Ազգն» անդրադարձել է մասնավորապես Գյումրի-Երեւան էլեկտրագնացքի եւ նրանով երթեւեկող ուղեւորների վիճակին: Ցմռանը ինչպես այդ, այնպես էլ ուրիշ էլեկտրագնացքներ կանգնեցվեցին, որոշ չափով նորոգվեցին, մեծ դժվարությամբ առակիներ գտվեցին... Այսօր դրանք բեռ մեր օրերի չափանիշներով նորմալ գնացքներ չեն, բառայրեն վաղուց մաշված են, ֆիզիկապես հայից ընկած, բայց որ առայժմ այլ հնարավորություն չունենք, ծառայում են ուղեւորներին որպես կարեւոր ու համեմատաբար էժան փոխադրամիջոց: Մինչդեռ մի քանի օր առաջ, նորից առիթ ունենալով երթեւեկել Գյումրի-Երեւան, ապա եւ Երեւան-Արարատ էլեկտրագնացքներով, ցավով նկատեցինք, որ դրանց առակիները էլի են կոտրվել:

Մի կայարանում նկատեցինք քարերը ձեռքին պատրաստ կանգնած երեխաների: Բայց ցավն այն է, որ միայն երեխաները չեն «բաջագործները»: Նրանց շարքը համալրել են Արարատյան դաշտի շրջաններից Երեւան ու Գյումրի մեկնող բանջարեղենի վաճառքով զբաղվող բազմաթիվ վաճառողներ, որոնց համար «հարմար» է բազմամարդ կայարաններում իրենց բազմաթիվ արկղերը վագոն մտցնել ուղղակի լուսամուտից...

Թող գծային ոստիկանությունը, մեր գնացքների վագոններում դարերաբար եռուռաց անող եւ անձնագիր չունեցող երիտասարդ ուղեւորներին խորհրդավոր կերպով մի կողմ կանչող զինվորական համազգեստով հրացանավոր տղերքը, այլեւայլ ծառայությունների աշխատողներ այս ուղղությամբ էլ մի ինչ շարժվեն, փորձեն ամեն անգամ բռնել շար ձեռքը: Վնասարարներին ժամանակին կանգնեցնելը, նրանցից (եթե երեխա են՝ ծնողներից) մեծ տուգանքներ գանձելը, մի խոսքով՝ ներգործության տարբեր միջոցներ գործին կարող են օգնել:

ԳԵՂԱՄ ՄԱՐՏՈՅԱՆ

ՈՒՍԿՈՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ
Հասարակության և տարի
Գլխավոր և հիմնադիր
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեֆոն 562941, AT&T (7 8852) 151065,
e-mail INTERNET: azg2@armenia.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ՍԱՄՎԵԼ ԴԻԱՆԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՍՈՐԳԻՍ ՍՈՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE հանձնարարական
ծառայություն / 581841
Ոճը եւ տարածքները ՊԱՌԵԼ ԴԱՎԱԹՅԱՆԻ
Apple Macintosh
համակարգչային շարվածքը
«Ազգ» թերթի
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

տեղական

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ

Գյուղացին մնացել է աղեսի դեմ մեն-մենակ

Ամսվա սկզբին, ինչպես «Ազգը» գրել էր, Կրասնոսելսկի շրջկենտրոնում Վերին ու Ներքին Ճամբարակ եւ Թրուջար գյուղերում, իսկ դրանից մոտ 10 օր առաջ նաեւ Վահան գյուղում տոկալի աղես էր եղել՝ «կարկուտ խփել էր»: Պատմում էին, որ կարկուտ տեղացել է ամբողջ կես ժամ, գնդակը ծածկվել է 15-20 սանտիմետր հաստությամբ կարկտաշերտով, եւ միայն երկու օր անց է հալվել: Իմ աչքով տեսել եմ այդ աղեսի զարհուրելի հետեւանքները. տաղավարները բնաջնջված կարտոֆիլի, խաղողի, լոռու, ոլոռի, բանջարեղենի այլ ցանքատակ եւ գետնամած կանաչ զանգված, որն արդեն սկսում էր սեւանալ:

Ժամանակ ի՞նչ եք անելու, հարցրի, ինքս էլ չնկատելով, որ վշտահար գյուղացիներին դիմում եմ վշտախառն ձայնով, այնպես, ինչպես մարդիկ սովորաբար խոսում են ծանր հիվանդի սնարի մոտ:

Ի՞նչ պիտի անենք. հարին պիտի նստենք հացախ ուտենք, դատապարտենք դառնությամբ:

Քիչ հետո, մենք հազար տարվա ծանոթ հարազատի մտերմությամբ զրուցում էինք, եւ մարդիկ դատում էին այդ չարաբաստիկ կարկտահարությունից, որն, իրենց բնորոշիսի գյուղվարչության պետի ի՞նչ պիտի ասեր ինձ, ի՞նչ բվեր պիտի հրամցներ. եթե ազնիվ մարդ է՝ պիտի ասեր, թե գաղափար չունի վնասի չափերից, եթե հնուց «բրծված» է կեղծիքների մեջ մասից ծծած բվեր պիտի հրամցներ:

Շրջանում միակ դատարանատարանն, որը դատկերացում ուներ իր վարչական տնօրինությանը ենթակա տարածքի բնակիչներին հասած դատուհասի չափերից, Վահան գյուղի գյուղխորհրդի նախագահ Մարգիս Բալյանն էր: Նա նշեց, որ 10-15 օր առաջ Վահան գյուղին կարկտահարությունից հասած վնասի մասին ինքն ակտ է կազմել

բատարածություններ. ջարդուփշուր եղած հաղարջի բիեր, կարկտահարվածներից վիրավորված ու կարմրին տվող տանձի ու խնձորի փոքրիկ պտղներ, որոնք արդեն սկսում են բաշխվել... Կարկուտը երակ-երակ է անցել գյուղերի ու հանդերի վրայով, եւ այն տնամերձերն ու բաղամասերը, որոնք ընկել են նրա հարվածների տակ ողբալի տպավորություն են թողնում: Գյուղացիներն այս տարի լիովին զրկվել են իրենց առանց այն էլ ոչ այնքան շատ հողի բոլոր բարիքներից: Ոչ մի հույս չունի, թե գոնե ձմեռվա կարտոֆիլ կտանա, կարկուտը տեղացել է ծաղիկ տալուց առաջ, իսկ դա նշանակում է, որ հողում դեռ դալարներ չեն գոյացել, որոնցից հետո, եթե երկինքը գրա եւ եղանակը լավ լինի, որոշ չափով բերք ստանան: Եղանակի լավ լինելու մասին էլ դեռ որեւէ խոսք չի կարելի ասել. անվերջ անձրեւներ են, հողը գերխոնավացած է, եւ ամեն ինչ փտում-փչանում է:

Արծվաշենցի Սուրեն Օհանյանին, մի բանի այլ համագյուղացիների հետ, տեսա իր իսկ հողամասում խոշոր եղջերավոր անասուններ արածեցնելիս: Դա սեփականաշնորհումից նրա ստացած հողն էր, նրա վերջին հույսը, որտեղից պիտի խոս հնձեր ձմեռն անասուններին դատելու համար, բայց անիծյալ կարկից հետո այլեւս հնձելու բան չէր մնացել. մի բանի փուշ ու տատասկ եւ գետնամած կանաչ զանգված, որն արդեն սկսում էր սեւանալ:

Ժամանակ ի՞նչ եք անելու, հարցրի, ինքս էլ չնկատելով, որ վշտահար գյուղացիներին դիմում եմ վշտախառն ձայնով, այնպես, ինչպես մարդիկ սովորաբար խոսում են ծանր հիվանդի սնարի մոտ:

Ի՞նչ պիտի անենք. հարին պիտի նստենք հացախ ուտենք, դատապարտենք դառնությամբ:

Քիչ հետո, մենք հազար տարվա ծանոթ հարազատի մտերմությամբ զրուցում էինք, եւ մարդիկ դատում էին այդ չարաբաստիկ կարկտահարությունից, որն, իրենց բնորոշիսի գյուղվարչության պետի ի՞նչ պիտի ասեր ինձ, ի՞նչ բվեր պիտի հրամցներ. եթե ազնիվ մարդ է՝ պիտի ասեր, թե գաղափար չունի վնասի չափերից, եթե հնուց «բրծված» է կեղծիքների մեջ մասից ծծած բվեր պիտի հրամցներ:

Շրջանում միակ դատարանատարանն, որը դատկերացում ուներ իր վարչական տնօրինությանը ենթակա տարածքի բնակիչներին հասած դատուհասի չափերից, Վահան գյուղի գյուղխորհրդի նախագահ Մարգիս Բալյանն էր: Նա նշեց, որ 10-15 օր առաջ Վահան գյուղին կարկտահարությունից հասած վնասի մասին ինքն ակտ է կազմել (վնասվել է 180 հեկտար տարածություն) եւ այդ ակտը ներկայացրել է գյուղվարչություն, որից դեռ ոչ մի դատապասխան չի ստացվել: «Իսկ դեսությունից օգնության որեւէ հույս ունե՞ք» հարցիս դարձյալ Բալյանը երիտասարդ մարդու անմիջականությամբ դատասխանեց. «Ոչ»: Հետագա զրույցից հասկացա, որ կարկտահարության չափերի մասին ակտն էլ այս երիտասարդը կազմել էր սեփական նախաձեռնությամբ, այն անշնչար հույսով, որ դեսությունը, գուցե, եկամտահարկ չդատահանջի սեփականաշնորհված այն հողամասերից, որոնց «եկամուտը կարկուտը տարել է»:

Ես չգիտեմ, թե այդ ո՞ւմ իրավասությանն է վերաբերում, բայց այն զարհուրելի վնասները, որ դատճառել է կարկտահարությունը Կրասնոսելսկի բնակիչներին, ինձ հանգիստ չի տալիս: Եվ ես ուզում եմ դիմել Հայաստանի կառավարության համադատասխան դատարանատարանին, ինչո՞ւ եք նստել երեւանում, գյուղերը գնացեք, մարդկանց հետ զրուցեք, վնասի մասշտաբների մասին սեփական աչքերով դատկերացում կազմեք եւ այնժամ, ո՞վ գիտե, գուցե թե հարկ համարեք ու միջոցներ գտնեք օգնել գյուղացուն, առնվազն զիջեք այն հողատարածքների եկամտահարկերը, որոնք այս տարի ոչ մի եկամուտ չեն տալու:

ՌՈԲԵՐԿ ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ
Կրասնոսելսկի-Երեւան

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՆՔ

Եռօրյա սեմինար Սաղկաձորում

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) նախաձեռնությամբ հուլիսի 12-ին Ծաղկաձորում սկսվեցին եռօրյա սեմինար դարաշրջանների՝ պատերազմի օրենքի թեմայով: Հայկական բանակի կրտսեր անձնակազմի համար նախատեսված այս դարաշրջանները կվարի Շվեդիայի բանակի դատասխանող գնդապետ Լարս Էլիասսոնը: Պատերազմի օրենքի թեմայով սեմինար դարաշրջաններ նախատեսված է անցկացնել 100 հայ սպաների համար: Նման դասընթացավարությունը ՀՀ դատաստանության նախարարության հետ ԿԽՄԿ-ն ձեռք է բերել այս տարվա աշխարհին միջազգային մարդասիրական օրենքին նվիրված ԿԽՄԿ-ի Հայաստանում կազմակերպած առաջին սեմինար դարաշրջանների ընթացքում: Ըստ միջազգային մարդասիրական օրենքի լուսաբանման գծով դասախոսությունների Շանսալ Լեբրայի, ԿԽՄԿ-ն նման սեմինար դարաշրջաններ [illegible] է աշխարհի այն [illegible] որոնք ստանալ [illegible]

US

ԹԻՎ 79 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ

«Պահանջում ենք ձայնի իրավունք»

Հուլիսի 10-ի առավոտյան, Երեւան-Էջմիածին խճուղու Զվարթնոց գյուղի տարածքում ցույցի էին դուրս եկել 500 մարդ՝ դատահանջելով ձայնի իրավունք: Ինչպես դատարվեց, թիվ 79 ընտրատարածքի 601 տեղամասում ընտրելու իրավունք ունեցող 1900 քաղաքացիներից մոտ 700-ը, հանձնաժողովի կողմնակալ վերաբերմունքի դատճառով, հնարավորություն չէին ունեցել մասնակցելու Սահմանադրության հանրաքվեին, ինչպես նաեւ Ազգային ժողովի դատգամավորության թեկնածուի ընտրություններին: Ի դեմ, ցույցին մասնակցում էին նաեւ եղի ազգաբնակչության ներկայացուցիչներ: Հանձնաժողովի որոշ անդամներ, օգտվելով «ինֆորմացիայի դակասից», թյուրիմացության մեջ էին գցել նրանց:

Յուցարարները մոտ 40 րոպե տևողությամբ փակել էին ավտոմնտուղի Զվարթնոց գյուղի տարածքը՝ խցանելով երթևեկությունը: Նրանց «հյուրընկալեցին» Էջմիածին քաղաքի ՆԳ բաժնի աշխատակիցները: Բարեբախտաբար, բորբոքված կրքերը տեղի տվեցին խաղաղ բանակցություններին: Յուցարարներից կազմված 7 հոգանոց հանձնաժողովը ՀՀ Ազգային ժողովի դատգամավորության թեկնածուների Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացրեց նամակ բողոքը, որտեղ մասնավորապես ներկայացված էին տեղամասային հանձնաժողովի օրինախախտումները եւ վերը նշված տեղամասում կրկնակի ընտրություններ անցկացնելու դահանջը: Նրանց ընդունել էր Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ դրն. Զահանգիրյանը, խոստանալով երկօրյա ժամկետում իրավասու մարդկանցից կազմված հանձնաժողով դարձել տեղամաս իրավիճակը տեղում դարզելու համար: Սակայն, երեկ, կեսօրվա դրությամբ, ընտրողների աղաղողական վիճակը դեռեւս շարունակվում էր:

ԼԵՎԱՅԻ ՎԱՐԴԱՐՅԱՆ

ՕՏԱՐ ՍԱՍՈՒՆ

Հայաստանի ընտրություններն՝ արտավոր

Արտասահմանյան մամուլը շարունակում է հետաքրքրություն ցուցաբերել Հայաստանում հուլիսի 5-ին անցկացված ԱԺ-ի ընտրություններին եւ սահմանադրության հանրաքվեին: Մոնրեալում հրատարակվող «Գազետ» թերթն իր հուլիսի 11-ի համարում նշելով, որ «ընտրությունները շատ հեռու էին բավարար լինելուց», ավելացնում է, որ «կառավարության կողմից ստեղծված դայմանները անհնարին էին դարձրել ընդդիմության ոչ թե հաղթանակը, այլ նույնիսկ մասնակցությունը»: Այնդես որ, գրում է թերթը, զարմանալի չէ, որ իշխող վարչակարգի կողմնակից «Հանրադետություն» բլոկը, նախնական տվյալներով, գլխավորում է հաղթանակածների ցուցակը: «Սակայն կառավարությունը բոլորովին կարիք չուներ խարդախությունների դիմելու՝ հաղթանակի հասնելու համար, քանի որ խաղաղության հասատումով եւ տնտեսական վիճակի բարելավումով այն բավականին մեծ ժողովրդականություն էր վայելում երկրում», այնուհետեւ գրում է թերթը, եզրակացնելով, որ ըստ երեւույթին «այն չէր ցանկացել ռիսկի դիմել մրցակցության հավասար դայմանների առկայության դեդքում»:

Ընտրությունների ազատ, բայց ոչ արդար անցկացման, 9 կուսակցությունների մեկուսացման, միակողմանի տեղեկատվության եւ ընդհանրադես վատ կազմակերդվածության մասին ԵԱՀԿ-ի ներկայացրած մեջբերումներից հետո թերթը նշում է, որ ոչ մի դատճառաբանություն չի արդարացնում Հայաստանի ղեկավարների ժողովրդավարությունից շեղվելը դեդի ամբողջատիրություն:

«Անհասկանալի է, որ 7 տարվա դատերազմից հետո խաղաղության հասած երկրում սահմանափակում են ընդդիմության օրինական գործունեությունները», գրված է այնտեղ: «Մրցակցության հիմունքներով ընտրությունների անցկացումը դրական քայլ է Հայաստանի համար: Բայց, ավաղ, երկրում ցավալիորեն դակասում է խաղաղ ընդդիմության նկատմամբ այն դաշտանական հանդուրժողականությունը, որն անհրաժեշտ դայման է ազատական ժողովրդավարության արմատավորման համար», գրում է թերթը վերջում:

ԹԻՎ 48 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔ

Փախստականներ Հովհաննես Իգիթյանի համար

Երբ 1-2 ամիս առաջ Երեւանի թիվ 48 ընտրատարածքի դատգամավորության թեկնածու Հովհաննես Իգիթյանը հեղարտորեն այս ու այնտեղ հայտարարում էր, թե իր՝ մեկ Շիրակի նախագահական ընտրությունների հաջողությունը ապահովելի համար ՀՀ Ազգային ժողովի ընտրությունն ի՞նչ է որ, թեւահավասները ոմնիծաղ էին տալիս:

Փուլ առաջին՝ զտում

Հոգաս Հ. Իգիթյանի մյուս թեկնածուներին ամեն կերդ չգահանցելու դայքարը առավել ուժգնորեն սկսեց ծավալվել հարեւան տարածքի դատգամավորության թեկնածու, կոմդերատիվ տեխնիկումի տնօրեն Գերման Վարդանդեսյանի՝ հանձնաժողովի նախագահ նշանակելուց հետո: Իհարկե, Հովհ. Իգիթյանը մեկ Շիրակ չէր, բայց դարոն Վարդադետյանը մինչեւ գործի հաղթական ավարտը ջանք չխնայեց՝ այդ ընթացքում շրջանցելով նույնիսկ ընտրությունների մասին օրենքը: Ջանքերի արդյունքում 16 թեկնածուներից մնացին 6-ը: Ի դեմ, նրանցից երեքին (Սամվել Մանուկյան, Նորիկ Այվազյան, Արմեն Գեւորգյան) ընտրատարածքային եւ կենտրոնական ընտրական հանձնաժողովները չդահանջեցին մի տարգ դատճառով (լավ հիշեմ այս), հավաքված ստորագրությունների մեջ տեղ էին գտել հանրակացարաններում բնակվող փախստականների անուն ազգանունները: Բավականին հիմնավոր դատճառ, որի կողքով հիշյալ հանձնաժողովները անտարբեր չէին կարող անցնել: Ո՞ր օրենքը չէի՞ն ոտնահարելու:

Ընտրությունների նախօրյակին արդեն դարզ էր, որ համառ ու անգիջում դայքարը ՀՀՇ-ի թեկնածու Հովհաննես Իգիթյանին դատգամավոր դարձնելու համար կուլմինացիոն փուլում է: Երկու հավանական ախոյաններ՝ Մատվորակների միության կողմից առաջադրված ՀՅ Դաշնակցության անդամ Լ. Շիրինյանը եւ Ադի հանքի բնակիչ Գ. Արեյանը (մյուսները նույնդես) արդեն գիտեին՝ Իգիթյանի ռեգերվը ՆԳ հոսդիտալն է, որտեղ նախնական դայմանավորվածության համաձայն հոգուս վերջինիս արկղի մեջ գտնվելու է 150 քվեաթերթիկ: Թերեւս, այս կարեւոր խնդիրը ոչ մի կերդ չխոչընդոտելու համար էր, որ թիվ 325 (ՆԳ հոսդիտալ) տեղամասի հանձնաժողովի նախագահ Լաուրա Պետրոսյանը ամեն կերդ խանգարում էր հոսդիտալի «բնակիչների» հետ Իգիթյանից բացի մյուս թեկնածուների հանդիդումները: Բայց քանի որ հուլիսի 5-ին այս բեժ կետը արդեն հսկողության տակ էր, շահագրգիռ կողմը ոչ միայն չի կարողանում համադատասխան զինվորական համալրում կատարել, այլեւ եղած զինվորական եւ շարքային հիվանդներից (թվով 51 հոգի) միայն 16-ն է հավաքվում ՀՀՇ-ի թեկնածուի օգտին:

Փուլ երկրորդ՝ տագնապ

Այս փուլին բնորոշը նյարդային տագնապն էր, որ առավելապես ծավալվեց Ադի հանքի թիվ 11 դրոֆտ խուսումնարանի շենքում (319 տեղամաս): Դեռ առավոտյան ժամը 10-ին Ադի հանքի գիշերօթիկ դդրոցում եւ կոմդերատիվ տեխնիկումի հանրակացարանում ժամանակավոր փախստականների քվեարկության իրավունքը կասկածելի էր դարձել: Ինչպես դարզվեց, Իգիթյանի դատգամավորական դաշտանը ստանալու համար դարտադիր է ունենալ բնակության թույլտվություն: Ինչպես հայտնի է, Ադի հանքի բնակիչ Գ. Արեյանը, ինչպես նաեւ Լ. Շիրինյանը, ՀՅԴ-ական է: Ինչպես դարզվեց,

Հայրենական տպաւորութիւններ

ՀՌԱԿ-ը՝ Հայաստանի քաղաքական իրականութեան մէջ

ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ

Նախընտրական շրջանում, ընտրական դայլարի բռնաբռնի մեջ, ոչ մի բերք առպահովագրված չէ ապրանքների, չափազանցումների, անիմն-կրքոտ վերազրումների: Սակայն այն, ինչ արեց «Հայք» օրաթերթն իր 28 հոսնիս համարում, դուրս էր նույն այդ բերքի միջկուսակցական հարաբերություններում միենչ այդ ուղեգրած դարկեցս ու բարեկանոն կեցվածքից: «ՌԱԿ-ՀՌԱԿ հակասություններ. Ամիրսոնում Ռուբեն Միրզոյանցանին չեն սիրում» սեփական վերնագրի ներքո թերթը հարկ էր համարել անդրադառնալ ադրիլի 19-ին Երևանում զումարված ՀՌԱԿ 4-րդ դաշնամավորական ժողովի աշխատանքներին և այդ առթիվ ասենադրես Ռ. Միրզոյանցանի զեկուցմանը... Լոս Անջելեսից, հրատարակելով այնտեղ ապրող Ֆորգոմ Փասաճյանի զրությունը, որը լույս էր տեսել տեղի «Նոր կեանք» շաբաթաթերթում, այնինչ, մոտ երկու ամիս առաջ նույն «Հայք»-ը իր սեփական աշխատակցի Վազգեն Տերտերյանի գրչով մեկ տեղամ, արդեն... Երևանից, բարվական առաջիկայական անդրադարձել էր ՀՌԱԿ նույն համագումարին: Ճն ինչու էր ՀՀՇ դաշնակցությունը դիմել այդ հայլին՝ կասկածի տակ դնելով իրեն և իր աշխատակցի գրածի հավասարությունը կարելի է հասկանալ: Սակայն մեզ համար անհասկանալի մնաց, թե ի սկզբանե հարցը՝ ու հարցակա՞ն ՀՀՇ-ի դաշնակցությունն ինչո՞ւ էր այդման... «ստիպված» նման հայլի դիմելու: Եւ հանի որ «Հայք»-ն այդման հետաքրքրվում է ՀՌԱԿ-ի մասին անդրամիկանության թերթի տրված նյութերով, առաջարկում ենք արտատպել նաև այս մի հոդվածը, որը լույս է տեսել նույն «Նոր կեանքի» վերջին հայլիսի 13 (թիվ 31) բվակիր համարում:

մեջ ներդրում ունին նաև այլ կուսակցություններ, ինչպես կը նշէր ՀՌԱԿ-ի Հանրապետական վարչության անդամ և օրէնսգէտ Ռաֆիկ Պետրոսեան:

Նախագահական դրությունը Հայաստանի համար կրնայ երկարդի տար մը ըլլալ. այսօր, կասկածէ վեր է որ Հայաստան զօրաւոր բազուկի մը դէմ ունի հաղթական եւ ազատագրական իր առաջադրութիւններ իրագործելու. սակայն, ինչ կը դատսնի, եթէ վաղը արկածախնդիր հոգով նախագահ մը անցնի իշխանութեան գլուխը:

Լեւոն Տէր Պետրոսեան հասարակուած. ճկուն եւ Լոբեմամբ դիանագէտ անձնաւորութիւն մըն է. իրողութիւն մը որ փաստուեցաւ իր իշխանութեան տարիներուն: Անդրադարձ մը. երբ նախագահը կարծիք մը իմանալ կուզէր դատաստող սահմանադրութեան մասին, թող. թէ ամէն իշխանաւոր իր դատկերով կուզէ կազմել սահմանադրութիւնը. սակայն, ի՞նչ կրնայ դատահիլ մեր երկրին, երբ անկարող տկար, կամ արկածախնդիր անձ մը բարձրանայ իշխանութեան գլուխը: Նախագահը խօսեցաւ սահմանադրութեան բարեփոխման մասին, իբրեւ կենդանի օրէնք: Սակայն, դժբախտաբար այդ փոփոխութիւններ կատարելը ամէնէն առեղի անհնար կը դառնայ տկար իշխանաւորի մը օրերուն, որովհետեւ այդ իշխանաւորը միայն սահմանադրութեան այդ բոլոր դատութիւններով դիտի կրնայ արդարացնել իր սխալներն ու չափազանցութիւններ, չդնելու համար իր բռնատիրական ախորժակները:

Սահմանադրութեան հարցը. Հայաստանի տնտեսական հաղթականութիւնը. արդարեան խնդիրը եւ բազում այլ հարցեր ճնճարկեցան ՀՌԱԿ-ի շորրորդ նախընտրական յատուկ համագումարին, որ կայացաւ Հայֆիկարոնիայի փոքր դահլիճին մէջ: Հայկական իրականութեան մէջ ինչ անգամ ներկայ գտնուած են այսքան լուրջ հաղթական հատի մը: Հայաստանի մէջ, վերջին ճանի մը տարիներուն, կուսակցութեանց համագումարներ առելի կը յատկանշուին առեւելեան բազարի մթնոլորտով քան քաղաքական լրջութեամբ:

Մօտ 220 դատգամաւորներէն ներկայ էին 203-ը, ինչ որ անհասանելի իրագործում մըն է Հայաստանի փոխադրական ներկայ անբարձրակարգի դրութեան մէջ. Հայաստանի հիւսիսէն Գիւմրիէն. միւսէ հարաւ Գորիս ու Ղանիսն ներկայացուած էր կուսակցութիւնը:

ՀՌԱԿ-ի ատենադեսը Ռուբէն Միրզախանեան. իր վայելուչ հասակով բարձրացաւ բեմ ու ներկայացուց կուսակցութեան դրաստիրը: Նախկին վարչապետներէն Խոսրով Յարութիւնեան. որ կորիս նստած էր, իր ձեռին ունենալով դրաստիրի մէկ օրինակը, ինձի դառնալով ըսաւ.

– Սա մի քաղաքական լուրջ դոցումը, անկասկած որ շնորհներն են Ռուբէն Միրզախանեանին. որ դեռ իր 30 ական տարիին միջին սանդխամատերուն կը գլխատուէ Հայաստանի ամէնէն լրջախոհ, հասասարակուած եւ օտար դիւանագիտական շրջանակներէ յարգուած քաղաքական կազմակերպութիւններէն մէկը:

Գաղտնի՞ էր այս բոլորին, Միրզախանեանի լրջութիւնն է եւ օտական 20 ժամ աշխատելու տրամադրութիւնն ու ուժը:

Հայաստանի մէջ կուսակցութեանց կազմութեան օրերուն, շատ մը ոչ-ոչ ունեցան Հայաստանի մէջ, երբ «դատական կուսակցութիւն» կրանն. Դաշնակցութեան բոլոր մեղքերը կը փաթթեն բոլոր կուսակցութեանց վրայ: Արդար ըլլալու համար ամէն կուսակցութիւն դէմ է ենթարկուելու ու դատուի իր վարկով. իր բնոյթով եւ վաստակով: Այդ իմաստով կարելի չէ ամբաստանել ՀՌԱԿ-ը որ տարուսենկուած է արտասահմանէն: Ան շատ հասարակական շարժում մը ըլլալով կարտայայտէ Հայաստանի ժողովուրդին ամէնէն հարազատ զգացումները. այդ ժողովուրդը զրուած է ծայրայեղութիւններէն եւ այսօր ոչ միայն չվրդովեցաւ այդ եղյրէն. այլ զայն նկատեց իր խօսքին ամրոցացումը. որովհետեւ, ինչպես ասենք, ՀՌԱԿ-ը դէմ է ունենայ լայն դատաֆոր, որ հարազատօրէն արտայայտուի տարբեր իրար լրացնող տեսակէտներ, որոնցմէ դրսեւորուի մեր ազգակցական իրական դիմագիծը:

Հանդիպումի ընթացքին ոչ մէկ սկսեալութիւն եղաւ դատակցիչ ուժերու մասին, որոնք առանձնութեամբ ծնած էին ՀՌԱԿ-ի շարքերուն մէջ եւ որոնց տէրերը. ինչ մը կանխահասօրէն փոքրացին աբխարհին «տեսեր է» թէ Հայաստանի մէջ ՀՌԱԿ-ը երկրի բաժնուած է: Այդ տարերը ոչ զարգացիարակաս ոչ ալ վարչական տարակարծութեան մէջ էին ՀՌԱԿ-ի իշխանութեան հետ. անոնք դրկուած էին դարգացիս ներքին խլրտում առաջացնելու: Վստահաբար նաև մաս ունէին կասարուած սահաբկումներուն մէջ. որոնք իրենց կարգին այդ տարերուն բնորոշիչ «բարենիշ»-ը դարձան ասկնավար շարքերուն ու ժողովուրդին աչքին:

Անոնք այսօր, առ ի վարձատրութիւն իրենց տխուր վաստակին, ՀՀՇ-ի փէշերէն կախուած եւ կարգ մը սոցիալական յենակներով և հեղափոխական աթոռներու կը ձգտին:

Այնպէս կը թուի թէ երբեմն ներքին ցնցումներ իրենց դրական ազդեցութիւնը կունենան. ինչպէս ու նեցած են այս դարագային առելի խաղցնելով շարքեր. առելի ամար կերդով զօրավիգ կանգնելով դեկավարութեան:

Հայաստանի ընտրութեանց արդիւնքին սոյաեղո դէտ չկայ: Կի տարկուած մեքոնեներ առէն զրեթէ սահմանած են ճակատագիր յաոսիկայ երեսխնամական կազմին: Կուսակցութեանց համեմատական ուժն ու ժողովրդավարութիւնը ամրոցութեամբ դիտի չցդան այս խորհրդարանին մէջ:

Ինչ որ ալ ըլլան ընտրութեանց արդիւնքները. ՀՌԱԿ-ը Հայաստանի մէջ կը մնայ հասասարակութեան ու հանգիստ ուժի խորհրդանիշը. կը մնայ քաղաքական ուժ մը. որ դի տի կատարէ իր դերը այսօր ու վաղը շնորհիս Միրզախանեանի գլխաւորած ուշիմ եւ հեռատես դեկավարութեան:

30 Յունիս 1995

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՏԻԵԶԵՐԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամերիկացի աստղագնացի սենսացիոն հայտնությունները

Ռուս տիեզերագնացների կարծիքով նա պարզապես նախկում է

Տիեզերում գտնվելու տևողության գծով ամերիկացի աստղագնացների սենկորդակիր Նորման Թագարդը ուղղակի ցնցեց Հյուստոնի տիեզերական կենտրոնի իր ղեկերին, երբ միաժամանակ ղատմանց «Միր» ուղեծրակայանում կատարած իր 115-օրյա թռիչքի դժվարությունների մասին: Կայանում սնունդն անհանելի էր, ասաց նա հարցազրույցի ժամանակ: Համաբնակելի կարեւոր լուրերի վերաբերյալ կայանում հաղորդումներ չկային: Օրեր շարունակ հնարավոր չէր որեւէ մեկի հետ անգլերեն խոսել: Եվ վերջապես նա անչափ կարոտել էր իր ընտանիքին: «Մշակութային մեկուսացումը սաստիկ էր», դառնությամբ գանգատվել է 52 ամյա աստղագնացը:

«Վերջին 34 տարիներին օդաչուավոր 100 տիեզերական թռիչքներից հետո ոչ ոք հրաժարակայնորեն այդման անկեղծ չէր խոսել տիեզերական ճանապարհորդությունների մասին, որքան Թագարդը, հաղորդում է Ասոշիեյթեդ Պրես գործակալության թղթակիցը: Գուցե այդպես վարվի աստղագնացների նոր սերունդը 21-րդ դարի երկարատև առաքելությունների ժամանակ»:

ԱՄՆ օդագնացության եւ տիեզերական տարածության հետազոտման ազգային վարչության NASA-ի ներկայացուցիչները անմիջապես դատապարտեցին Թագարդի անօրինակ անկեղծությունը. հայտարարելով, որ հիմա իրենք ավելի լավ են դասակերացնում, թե ինչ ոլորտ է ձեռնարկել երկարատև տիեզերական թռիչքների դեղորում: Նկատի ունենալով, որ ես 4 ամերիկացիներ առաջիկա երկու տարում դեռ է մի քանի ամիս անցկացնեն «Միր» կայանում, ուղեծրային ճանճրույթի դեմ մղվող դայքարը կարող է դասակելի լրացուցիչ հասկացումներ:

Սակայն NASA-ի գլխավոր դժվարությունները CNN-ի լուրերի աղբյուրներ հետաձգման կամ տնտեսությունների առաքման հետ չեն կապված: Թագարդի հայտնությունները առանձնակի ուշադրությամբ են ընկալում Կաղիֆորնիայի բլրի վրա, որտեղ բազմաթիվ օրենսդիրներ ձգտում են խիստ կրճատել տիեզերական ծախսերը: Իսկ եթե դարգվի, որ առանց անգլերենի անցկացրած 105 օրերը անդրադարձել են ամերիկացու առողջության: Ա Ա-ի շտապությունը սեփական նաբեռնոտիման դասակերներ Կոնգրեսում էլ ավելի կուժեղանան:

Դենադի Ստրեկալովը ուղեծրում անհամեմատ շատ ժամանակ է անցկացրել, քան Նորման Թագարդը: Վլադիմիր Դեժուրովի հետ նա կերել է նույն սնունդը: Նրանց ընտանիքները նույնպես գտնվում էին Երկրի վրա: Նախքան ամերիկացի աստղագնացի գալը նրանք մի քանի ամիս միմյանցից որեւէ անգլերեն բառ չէին լսել: Բուժգնությունը ցույց կտա, թե դա արդյո՞ք կործանարար կերդով է անդրադարձել նրանց առողջության վրա:

Թռիչքից առաջ Նորման Թագարդը «Իզվեստիայի» թղթակցին ասել էր, որ ինքը ռուսական անձնակազմի անդամ ամերիկացի է եւ կենբարկվի ռուսական կանոններին: Մասնագիտական առումով աստղագնացը լավ կատարեց իր դարտականությունները: Բայց հմուտ հոգեբանը կարող էր նկատել, որ երկարատև թռիչքը հոգեբանորեն ծանր է ազդում Թագարդի վրա: Կաղի սեանսների ժամանակ դասվել էր, ձեռքերը կրծքին խաչած բավարարվում էր կարճ դատասխաններով:

Թռիչքից դեռ շատ առաջ հայտնի էր, որ արշավախմբի աշխատանքային լեզուն ռուսերենն է: Թագարդն այն սովորել էր մոտ երկու տարի: Բայց նույնիսկ հաշվի առնելով նրա անձնական դժվարությունները, հազիվ թե նոյատակահարմար լիներ անգլերենի փոխարեն Թռիչքի կառավարման կենտրոնի դդ աշխատանքը:

Տիեզերագնացների սնունդը դատրաստվում է հաշվի առնելով ազգային խոհանոցի առանձնահատկությունները, հատկապես երկարատև թռիչքների ժամանակ: Եվ անհնար էր ամերիկացու համար առանձին սեղան բացել: Ի դեպ, վերջերս Վալերի Պոլյակովը բռավ ոչ թե Թագարդի նման 115, այլ 426 օր եւ Երկիր վերադարձավ հիանալի վիճակում:

Ինչ վերաբերում է «Մշակութային տեղեկատվությանը», ապա ամեն օր կայան էր հաղորդվում հեռուստատեսային դատկեր, տվում էին լուրերի ռադիոդաղարկումներ: Հոգեբանական օժանդակության խմբում հասկանում են, որ դա գուցե անբավարար է, բայց տիեզերագնացության ներկա մակարդակի հնարավորություններն այդման են: Իսկ Թագարդը կարող էր հետը վերցնել ամերիկյան արտադրության տեսաժապավենները:

Ռուս տիեզերագնացների ցոկատում ավտոսանեմով ընկալեցին Նորման Թագարդի սկանդալային հարցազրույցներին վերաբերող հաղորդումները: Տիեզերագնացների կարծիքով նա դարզապես նկվում է:

«Իզվեստիա», 8 հուլիս, 1995 թ.

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Ներկայացուցիչների դալատը քվեարկեց ԱՊՀ-ին տվող օգնության կրճատման օգտին

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 12 ՀՈՒԼԻՍ, ՌԻԱ ՍՆԱՐՔ-ԱՍՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների դալատը քվեարկեց արտասահմանյան երկրներին, այդ թվում Ռուսաստանին եւ ԱՊՀ մյուս երկրներին տվող ամերիկյան ֆինանսական օգնության ծավալների կրճատման օգտին: Ամերիկացի օրենսդիրների հաստատած օրինագծով նախատեսվում է 1996 ֆինանսական տարում 595 մլն դոլար հատկացնել նախկին ԽՍՀՄ դետությունների, ինչը 15 միլիոնով դակաս է ընթացիկ տարվա համանման ծախսերից: Փաստաթուղթն օրենք կդառնա ԱՄՆ Սենատի հաստատումից եւ նախագահ Քլինթոնի ստորագրությունն ստանալուց հետո: Հետագա փուլերում այն կարող է փոփոխվել, քանի որ Սդիտակ տունն արդեն հայտարարել է, թե ներկա տեսքով օրինագիծը «կտահմանափակի արդյունավետ արտաքին քաղաքականության վարման հնարավորությունը»:

ԲՐՅՈՒՍԵԼ

Եվրամիությունը հուլիսի 17-ին Ռուսաստանի հետ կստորագրի առեւտրի ժամանակավոր համաձայնագիր

ԲՐՅՈՒՍԵԼ, 12 ՀՈՒԼԻՍ, ՌԻԱ ՍՆԱՐՔ-ԱՍՆ: Եվրոդական հանձնաժողովը կարծում է, որ Չեչնիայի խնդրի քաղաքական կարգավորումը ընթանում է ճիշտ ուղղությամբ, ուստի արդեն անհրաժեշտ փաստաթղթեր է դատրաստել Եվրամիության նախարարների խորհրդում հուլիսի 17-ին Եվրամիության եւ Ռուսաստանի առեւտրի ժամանակավոր համաձայնագրի ստորագրման համար: Այդ մասին այսօր ՌԻԱ-ի թղթակցին հայտարարեց Եվրահանձնաժողովի ներկայացուցիչ Նիկոլաուս Վան Դեր Պասը: Նա ավելացրեց, որ Եվրամիության եւ Ռուսաստանի բարձր մակարդակի քաղաքական երկխոսության շարունակման շրջանակներում սեդտեմբերի 12-13-ը Մոսկվա կայցելի Եվրոդական հանձնաժողովի նախագահ ժակ Սանտերը, որը «Եվրոդական եռյակի» կազմում հանդիդում կունենա նախագահ Բորիս Ելցինի հետ:

Միաժամանակ հաղորդվում է, որ հուլիսի 17-18-ը Բրյուսել կայցելի Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւը, որը նախագահ Ելցինի հանձնարարությամբ Եվրամիության արտգործնախարարների նիստում կստորագրի Ռուսաստանի ու Եվրամիության համագործակցության ժամանակավոր համաձայնագիր: Այդ մասին հայտնեց ԱԳՆ ներկայացուցիչ Գրիգորի Կարասինը:

ՀԱՄԱՌՈՏ

Կուբայում զբոսաշրջությունը Շահարից եկամտաբեր է

Շահարի արտադրությունը Կուբայում ավանդաբար եղել է տարադրամի մուտքի գլխավոր աղբյուր: Սակայն անցյալ տարի առաջին անգամ երկրի եկամտի խոշորագույն աղբյուր դարձավ զբոսաշրջությունը, բերելով 800 մլն դոլար, հաղորդում է L'Express հանդեսը:

Պետերբուրգում 50 հազար անօթեւան

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 ՀՈՒԼԻՍ, ՍՆԱՐՔ-ԱՍՆ-ՊՐԵՍ: Սանկտ Պետերբուրգի 5 միլիոնանոց բնակչության մեկ տոկոսը կազմում են անօթեւանները: Ըստ «Նոյլեժ կա» բարեգործական հիմնադրամի տվյալների, հաղորդում է ՌՈՒՍ 50 հազար անօթեւան մարդ:

«ԳԼՈԲՈՒՍ» ՍՊԸ-Ն ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է
ՖԻՆԱԿԱՆ
ԹՈՒՂԹ
լազերային տպիչների եւ պատճենահան սարքերի համար
(տպիտակ, A4 ֆորմատի, ունի RANK XEROX ֆիրմայի վկայագիր)
Հեռախոս՝ 56-11-44
XEROX PAPER

ԱՇԽԱՐՀ

Միլիարդատերերը նույնպես լինում են հարուստ եւ աղքատ

Բիլ Գեյթս

Ամերիկյան «Ֆորբս» հանդեսի հրատարակած աշխարհի ամենահարուստ մարդկանց ցանկում առաջին երկու տեղերը գրավել են ամերիկացիները: Ամենահարուստ ճանաչվել է «Մայքրոսոֆթ» համակարգչային ընկերության հիմնադիր եւ տնօրեն Բիլ Գեյթսը, որի կարողությունը գնահատվում է 12,9 միլիարդ դոլար:

Նրանից փոքր ինչ հետ է մնում Ուորեն Բաֆետը աշխարհում նվազ հայտնի «Բերքշայր հեթավեյ» ին վնասիգիտոն ընկերության տերը. նրա կապիտալը կազմում է 10,7 միլիարդ:

Երրորդ տեղում է միլիարդատերերի անցյալ տարվա մրցարշավի հաղթող ճապոնացի Յոսիակա Յացումին: Նա առաջատար դիրքերը կորցրել է անշարժ կայքի գների անկման պատճառով, եւ այժմ նրա կարողությունը գնահատվում է ընդամենը 9 միլիարդ դոլար: Ճապոնացու հետ դատավոր երրորդ տեղը կիսում է ջիդեյ Հանս Ռաուսինգը, որը փաթեթավորման միջազգային «Տետրա Լավալ» խոշոր ֆիրմայի դեկավարն է:

Սուր մրցակցության դայմաններում չորրորդ տեղն զբաղեցրել է ջիդեյցարացի Պոլ Սաշեն, որը ժամանակին հաջող ամուսնություն է իրականացրել, տիրելով «Ռոշա» դեղագործական կայարությանը: Նրանից ընդամենը 100 միլիոնով հետ է մնացել տարիքցի Յայ Վան Լիենը, որը աղահովագրական ընկերության տնօրեն է:

Վեցերորդ տեղը կիսում են կանադացի լրագրային մագնատ Քենեթ Թոմսոնը եւ հոնկոնգցի ձեռնարկատեր Լի Շաո Կին (6,5 միլիարդ): Նրանց հաջորդում է «Հենդայ» կորդորացիայի հիմնադիր Չոն Չժու Յունը (6,2 միլիարդ):

Ինչպես նշում է «Ֆորբս», աշխարհի ամենահարուստ 10 մարդկանցից 7-ը իրենք են կոել իրենց երջանկությունը, աներեւակայելի դրամագլուխ վաստակելով փաստորեն ոչնչից: Ցանկում չկան դետությունների դեկավարներ կամ ներկայումս աղրող միադետներ:

Աշխարհագրական առումով միլիարդատերերի թվով առաջին տեղում է ԱՄՆ-ը (129 մարդ): Նրան հաջորդում է Ասիան (107), Եվրոդան (100), Լատինական Ամերիկան (35), Աֆրիկան եւ Մերձավոր Արեւելքը (միասին 17):

Դերասանների մեջ առաջին տեղում է ԱՄՆ-ում «Ռոլ Մարս» խաղաթղթերի ցանցի հիմնադիր Սեմ Ռոլթոնի ընտանիքը (23,4 միլիարդ): Այս ցանկում Ռոկֆելլերների ընտանիքն զբաղեցնում է ընդամենը 9-րդ տեղը:

Ռոյթեր

American University of Armenia
Հայաստանի ամերիկեան համալսարան
Հատուկ դասընթացների բաժինը կազմակերդում է մեկօրյա գիտաժողով հետեւյալ թեմայով

Հայաստան. Ինչդես հարմարվել փոփոխվող միջազգային իրավիճակին
1995 թ. օգոստոսի 2-ին եւ օգոստոսի 9-ին. շաբաթաթթի. ժ. 10.00-17.00
Հայաստանի ամերիկյան համալսարանի
փոքր դահլիճում (հիմնական հարկ)
Երեւան, Մարշալ Բաղրամյան 40
Ստրատեգիական դլանավորում փոփոխությունների կառավարման համար
Դասախոս՝ դր. Էդ Անդլ
Ստրատեգիական կանխատեսման եւ առաքելության մշակում
Նդդասակների դրոում
Ստրատեգիայի իրականացում
Անընդհատ բարելավվող ոռակ - դասախոս՝ դր. Ռոնալդ Բենսքն
Ոռակի սահմանումը
Ոռակի մակարդակների հաստատում Ինչդե՞ս եվ իմանամ
Ոռակի շարունակական բարելավման միջոցներ
Կառավարման դրահանջներ
Մատոր եւ ընկերության մշակութային դրահանջներ
Հասանելիության միջազգային տոկայնի - դասախոս՝ դր. Յարոակ Հեիբա
Շուկայագիտության միջազգային հասկացությունը
Միջազգային տոկայում կատարվող փոփոխություններն ու միտումները
Կիրառությունը Հայաստանում
Դիտաժողովը կընթանա անգլերեն լեզվով հայերեն համընթաց բարգմանությամբ:

Մուտքն ազատ է:
Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում եմք զանգահարել 27-33-70 կամ 27-16-58:

digitised by A.R.A.R.@

Մշակույթ

Ստեփան Ալաջաջյանի հետ

Նրա ուշացած յոթանասնամյակի առիթով

Ասում են՝ ամերիկահայությանը նում է Ստեփան Ալաջաջյանի՝ տաղանդավոր գրողի ու հրաշալի մարդու, 70-ամյակը: Նում է տարիներս ուշացմամբ: Իսկ ես ճիշտ իր ծննդյան օրը, անցած տարվա հունվարի 3-ին, եղվարդի իմ խրճիթում արգասնական թթի օղիով լի բաժակ եմ բարձրացրել, խմել նրա կենացը, մաղթել, ավելի ճիշտ՝ երազել, որ մենք երկուսով, ինքը՝ Ստեփան Ալաջաջյանը և ես՝ Բագրատ Ուլուբաբյանս, աղրենք այնքան, որ կարողանամ իրականացնել մեր մի՝ թեթև, տարօրինակ, սակայն ինձ համար շատ կարևոր գաղափար, որ կայացրել էինք 1981-ի ամռանը, ԽՍՀՄ գրողների միության հանձնաժողովի դահլիճում: Այո՛, կրեմլյան այն փառավոր դահլիճո՛ւմ, սակայն ոչ սառնամանիքից, դահլիճից ու նրա մթնոլորտից վերացած, միայն երկուսիս զարուրած երազի թև խենթության ոլորտում:

արձակի անդասանը կենսավորող, այդ կյանքը բմբիրից հանող և նոր ու արգասավոր ուղի մտցնող ուժ: Հետագա տարիներին ու տասնամյակներին ինքը՝ Ալաջաջյանն իր նոր գործերով, մեր ազգային ճակատագրի տարաբերումները վերակենդանացնող վեպերով ու վիպակներով («Առանց հայրենիքի», «Եղեգներ չլսնարիվեցին», «Անառագաստ նավակներ», «Աղաղաժները արտասվել գիտեն») ցույց տվեց, թե ինչպես ոլորտի անցնել այդ ուղին, գրական ու ազգային գաղափարական ինչ սկզբունքներով, առնչականորեն, հոգատր կեցվածքով...

Սակայն այսօր գրչ եմ վերցրել ոչ թե սխրելի Ստեփանի գրական գործի բարձր արժանիքները նշելու և գովելու: Այդ արել է մեր գրական քննադատությունը, և դրան տեղյակ են մեր բոլոր այն ընթերցողները, ովքեր համար բանկ է հայ բանաստեղծությունը, այդ գրականության այսօրն ու ապագան:

Հիմա ինձ հետ է այն Ստեփանը, որ խորաթես ապրում էր Արցախի խնդրով, այն համարում էր իր ցավը, մտածումն ու երազանքը:

65-66 թվականների բառն վերջերը կասեցրել էին մեր բնաձիներն ու սոս բարեկամները: Արցախի մասին խոսելը վերսին դարձել էր վտանգալից: Եվ այդ ժամանակ Հայաստանի գրողների միության նորատոյր Ստեփան Ալաջաջյանը մի օր հեռախոսով ինձ հրավիրեց իր առանձնասենյակը, թե «Սոլոմոն եմ ճանաչ Պարույրին: Գա, բան ունի դարձնանավորվենք: Ասում է՝ մեզ մի գաղափար մտահոգություն կա: Գրողներ հանգստացրեց, խոսեն Արցախին է վերաբերում, որիշ բան չկարծես»:

Մինչ այդ էլ Ստեփանը հետաքրքրվում էր Արցախի ճակատագրով. Քանի քանի անգամ Երևանում Լինի գրուցել: 1965-ին, երբ Ստեփան Սակաբեկյանց գնացել, Մոսկվայում դեկավար մարմինների դռներն էլ սա տում, դաշտանական թե ստեղծագործական ինչ որ հարցով ինքն էլ այնտեղ էր, և Գրողների միությունում, Հայաստանի ներկայացուցիչ Գրիգոր Սահակյանի մոտ, ժամերով խոսում Լինի. վախ դուռերը բացելու, գործն ասաց տանկա կոծաներ փնտրում: Բայց հիմա ի՞նչ ասի խոսենք: Դարձանավորվենք Մոսկվայից Պարույր Սևակի հետ էր, չնայած ինքն էլ Գրողների միության ղեկավարներից մեկը, մեր դեմ մի գավսաբ էր միայն և մի կարգան չտեսնի սեփական գաղափարից:

Պարույր Սևակ և դարձվեց, որ խենթ հեռախոսազանգ կազմած դարձնանգության [illegible] հանգանակ [illegible] Ստեփան Ալաջաջյանը Ալիեի Այրիչյանը ծավալում հարձակման անցավ, կաբառված Կենտրոնի հետ միասին Արցախում ստեղծեց այնտիսի վիճակ, որ թվում էր՝ մեկ տասնամյակ հետո հայաբնակ հարի լոկ հուշն է մնալու:

Այդ ժամանակ Ստեփան Ալաջաջյանն անձնական ծանրագույն վիշտ ուներ. վիրահատությամբ փրկվել էր ճակատագրական դաժան հիվանդությունից. սակայն չէր կարողանում խոսել առանց ինչ որ աղարաշի, որի հետ հաճախ կռվի էր մտնում: Եվ այս վիճակում էլ հանդիպելիս հարցափորձ էր անում Արցախից:

...Եվ այնքոր էլ, 1981 թ. ամառային այն տոթ օրը, Կրեմլյան դահլիճի արհեստական հովության մեջ ծորացող ձանձրալի ճառերի մրմնդոտում նստած էինք իրար կողքի, զրուցում էինք համագումարի հետ ոչ մի առնչություն չունեցող, այնքան հեռու-հեռավոր Արցախի մասին: Ինքը խոսում էր անձայն, միայն շուրթերով, իսկ ես ձայնով որ նրանի թե խանգարում էր հարեւաններին: Նույնիսկ Ստեփանի տիկինը Սեդան, որ նրա հետ էր միշտ ու ամենուր, հեռու էր վիրահատությունից հետո օգնության ու խնամքի կարոտ ամուսնուն, անհանգստացած էր մեր զրույցով: Հայցքով մեկ մեկ վանում էր օտար հարեւանների հրմնցոց հայացքները... Եվ երբ մենք էլ հասկացանք մեր զրույցի այդ շրջադասում անընդունելի լինելը, Ստեփանը բաց արեց դաստագավորական գրքույկը եւ ճերմակ բրիին գրեց. «Իսկ դու հավատո՞ւմ ես, որ վերջը լավ կլինի»: «Ոչ միայն հավատում, այլեւ վստահ եմ, դաստախանեցի տեղեկատեղը, կարծեմ ավելացնելով նաեւ, այլապես առդեպ ավելորդ կհամարեի»: Երեւի դաստախանս շատ էր հրազային: Ստեփանի միշտ դայծառ, անկնճռոտ դեմքին լայն ժպիտ երեւաց, եւ նա գրեց. «Երանի՝ ճիշտ լինես. հասնենք այդ օրին. թող հետ գոնե մեկ անգամ գնանք, տեսնենք այն երազ աշխարհը եւ նոր միայն...»:

Չգիտեմ հիմա հիշո՞ւմ է այս դեպքը, թե՞ անցյալ տարիների ցավերն ու տառապանքները մի կողմ են հրել այն, մոռացնել տվել, եւ եղբայր Ստեփանը դարձյալ դարակգրի մեր ազգային ողբերգության ծայրերն է թերթում կամ առօրյա հոգսերի հետ է, որիշ-որիշ տագնապների հետ: Սակայն հիշում եմ եւ ասում այն հեռավոր օրվա մեր երազին վայել շարունակությունը, թե վերջավորությունը: Չէ՞ որ իրականացել է այն հեռավոր օրվա մեր խենթ երազը յոթնամյա դայքարի, անհամ զոհերի, անհամար զոհողությունների ու զոհերի գնով, անհերաժեշտ խիզախությամբ:

Եվ որ է, թե իմ հին ու սիրելի բարեկամ Ստեփան Ալաջաջյանը մեկ էլ հանկարծ հայտնվեր այս կողմերում, միասին գնայինք Արցախական աշխարհ, տեսնեինք վայելեինք նրա անկախությունը, միասին ասրեինք այն անդարձի երջանկությունը, որ հարազատի փրկությունից է լինում: Ամենաարագին հարազատի:

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Մշակույթի գործիչներն անտարբե՞ր են, թե՞ մտահոգ

Մյասնիկյան դաստարանը հերթում է Մնարի յուրը

Մեր թերթի երեկվա համարում տպագրել էինք «Մշակույթի գործիչները մտահոգ են Մազմանյանի ծերբակալությամբ» Սնարի լրատվական գործակալության մեզ ուղարկած լուրը, ըստ որի այս շաբաթ կայանալիք դատաքննության նախօրեին Երեւանի Մյասնիկյանի շրջանի դատավորի եւ հանրապետության գլխավոր դատախազի անունով ստացվել են բազմաթիվ հանրագրեր՝ ստորագրված Գոհար Գասպարյանի, Տիգրան Լեւոնյանի, Տաթեւիկ Սազանդարյանի, Խորեն Աբրահամյանի եւ ուրիշների անունից: Ինչպես երկու օր առաջ, այնպես էլ երեկ հեռախոսի անընդհատ աշխատանքի պատճառով չկարողացանք հոդվածում շոշափված հեղինակությունների կարծիքը ներկայացնել եւ այդ իսկ պատճառով առայժմ բավարարվում ենք տպագրելով դատավոր Մարաս Կտավայանի՝ Սնարի տված տեղեկությանը հերքող խոսքը: Մեզ հետ հեռախոսազրույցում պարոն դատավորն ասաց, որ դատական նիստը նշանակված է եղել հունիսի 29-ին, բայց չի կայացել՝ Արմեն Մազմանյանի մեկուսարանի սանիտարական բաժնում պառկած լինելու պատճառով: Իսկ առաջիկա շաբաթ նրա գործը դատարանում չի լսվելու: Պարոն Կտավայանը հերքեց նաեւ մշակույթի որեւէ գործչի՝ իրենց այդ հարցի առնչությամբ միջնորդագիր ուղարկելը: «Խորեն Աբրահամյանին վերջին անգամ տեսել ենք հեռուստացույցով՝ Արեւելահայկական բանկը գովազդելիս», ասաց նա: Չնայած պրն Կտավայանը «չհաջողեց» լրագրողիս՝ պրն Մազմանյանի հետ հանդիպելու (նաեւ նրա կարծիքը զետեղելու) ցանկությունը՝ մեկուսարանում ենթադրելի բազմաթիվ խոչընդոտների պատճառով, բայց կարծում ենք, թե այս նյութին նորից անդրադարձի ժամանակ ավելի «տեղյակ» լրատվություն կհաղորդենք:

Հեմմիջորեին Սնարի լրատվական գործակալությունն ուղարկեց մի նոր բարձրաձայնություն՝ ստորագրված մի քանի հոգու՝ Մարաս Կտավայանի՝ Սնարի տված տեղեկությանը հերքող խոսքը: Մեզ հետ հեռախոսազրույցում պարոն դատավորն ասաց, որ դատական նիստը նշանակված է եղել հունիսի 29-ին, բայց չի կայացել՝ Արմեն Մազմանյանի մեկուսարանի սանիտարական բաժնում պառկած լինելու պատճառով: Իսկ առաջիկա շաբաթ նրա գործը դատարանում չի լսվելու: Պարոն Կտավայանը հերքեց նաեւ մշակույթի որեւէ գործչի՝ իրենց այդ հարցի առնչությամբ միջնորդագիր ուղարկելը: «Խորեն Աբրահամյանին վերջին անգամ տեսել ենք հեռուստացույցով՝ Արեւելահայկական բանկը գովազդելիս», ասաց նա: Չնայած պրն Կտավայանը «չհաջողեց» լրագրողիս՝ պրն Մազմանյանի հետ հանդիպելու (նաեւ նրա կարծիքը զետեղելու) ցանկությունը՝ մեկուսարանում ենթադրելի բազմաթիվ խոչընդոտների պատճառով, բայց կարծում ենք, թե այս նյութին նորից անդրադարձի ժամանակ ավելի «տեղյակ» լրատվություն կհաղորդենք:

ՓԱՌԱՏՈՆ

«Ռուսական դիվերսիա» Նյու Յորքի կենտրոնում

Այս տարվա աշնանը Մանհեթեն կենտրոնում տեղի կունենա ռուսալեզու երգիչների «Մեծ խնձոր-Նյու Յորք» առաջին փառատոնը: Դա կլինի 4-ժամյա տպավորիչ շահանդես Ամերիկայում, Իսրայելում, Արգենտինայում, Կանադայում, Բելառուսում, Ուկրաինայում, Հայաստանում եւ Ռուսաստանում աղրող ռուսալեզու երիտասարդ կատարողների մասնակցությամբ, որոնք ճանաչարան են հարքում դեռի համաշխարհային շոուբիզնես:

Փառատոնի գաղափարը մտահղացել են Gold Vision ընկերության ռուսաստանցի տերերը՝ գովազդային ժառանգներ Բեռսայանի որդիներ Տիգրան եւ Դավիթ Բեռսայան եղբայրները, երբ Նյու Յորքում նկարահանում էին Իգոր Սարուխանովի «Ցուրակ-աղվես» երգը: Այնտեղ նրանք հանդիպեցին իրենց հին ընկեր Ռոբերտ Շահրամանյանին, որը ներկայումս գործակցում է ամերիկյան Alien Flyers ձայնագրման ֆիրմային: Որոշեցին միավորել ջանքերը եւ ամերիկացիներին ցուցադրել սիյուտի լավ երգիչներին: Փառատոնի գլխավոր մրցանակը, բացի դատկառելի գումարից, կլինի անվճար ձայնագրությունը Alien Flyers ստուդիայում:

Կազմակերպիչները ռուսաստանցիներից կուզենային տեսնել Իրինա Ալեգրովային, Անժելիկա Վարումին եւ Իգոր Սարուխանովին: Վերջինս արդեն տվել է իր համաձայնությունը, իսկ երկու հայտնի երգչուհիները հրավերներ կստանան, երբ վերադառնան հյուրախաղերից: Տիգրան Բեռսայանի կարծիքով, Ռուսաստանից ժյուրիի անդամներ կարող են դառնալ Իգոր Կռուտոյը եւ Իրինա Պոնարովսկայան: Դեռ հայտնի չէ, թե ով կմասնակցի բուն փառատոնին եւ Նյու Յորքում կներկայացնի ռուսական կողմը: Ամենայն հավանականությամբ, որոշումը կընդունի Gold Vision ընկերությունը՝ ի դեմս Դավիթի եւ Տիգրանի: Նրանց խոսքերով, «կարեւորը, որ փառատոնը տեղի ունենա այս տարի, իսկ եկող տարի կանցկացվեն ընտրական փուլեր»:

«Մեծ խնձոր-Նյու Յորք» փառատոնի հրավեր կստանան նաեւ ձայնագրման ապաստար ֆիրմաների ներկայացուցիչները: Մեծ նավարկություն մաղթենք «Մեծ խնձորին»:

«ՅՍ ՍՈԼՈՂՈՅ»

Երեւանի «Հրաչյա Աճառյան» համալսարանը կստարում է 1995-96 ուսարվա ընդունելություն հետեւյալ ֆակուլտետներում

- Միջազգային հարաբերություններ եւ բարգմանչություն
- Միջազգային իրավունք
- Միջազգային տնտեսական հարաբերություններ
- Միջազգային ինֆորմացիա եւ բարգմանչություն
- Պարսից լեզու, գրականություն եւ բարգմանչություն
- Իրավագիտություն
- Մենեջմենթ եւ մարկետինգ
- Բանասիրական
- Պատմություն եւ աշխարհագրություն
- Մանկավարժություն եւ տարրական կրթության մեթոդիկա
- Նախադպրոցական մանկավարժություն եւ հոգեբանություն
- Քիմիա եւ կենսաբանություն
- Դեֆեկտոլոգիա
- Կիրառական մաթեմատիկա:

Ընդունելությունը կստարվում է մրցութային կարգով:

Ուսման տեւողությունը մանկավարժության եւ տարրական կրթության մեթոդիկայի, նախադպրոցական մանկավարժության եւ հոգեբանության ու դեֆեկտոլոգիայի ֆակուլտետներում չորս տարի է, մյուս ֆակուլտետներում հինգ տարի:

Համալսարանը կնվիրած դասընթացների հիման վրա կարող է գեղագիտական ուսանողներին եւ նորատակային ասպիրանտներին ուղարկել սովորելու, իսկ երիտասարդ դասախոսներին վերադասրաստման Միլանի, Փարիզի, Մադրիդի, Սրեմի, Սալոնիկի, Թեհրանի եւ Վաշինգտոնի համալսարաններ, Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտ:

Դիմորդներ ոչնչ է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը. միջնակարգ կրթության վկայական, միջնակարգ մասնագիտական կրթության դիպլոմ, տեղեկանք ս-ողջության մասին, վեց լուսանկար (3x4 սմ չափի):

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ հուլիսի 20-ը.
Քննությունները կանցկացվեն հուլիսի 21-ից 30-ը:
Համալսարանի հասցեն Ալեք Մանուկյան (նախկին Մոսվյան) 13:
Հեռախոսներ՝ 55-67-90, 55-46-80:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

digitised by A.R.A.R.@

ՈՒԵՖԱ

«Արարատի» եւ «Շիրակի» մրցակիցները լեհական թիմերն են

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Երեկ Ժնեւի «Նոգա Հիլթոն» հյուրանոցում տեղի ունեցավ եվրոպական ակումբային 3 մրցաշարերի Չեմպիոնների լիգայի, Գավաթակիրների գավաթի եւ ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության վիճակահանությունը: Ինչպես արդեն հայտնի է, այս անգամ Հայաստանին հատկացվել է 2 տեղ. Երեւանի «Արարատը» հանդես է գալու Գավաթակիրների գավաթի խաղարկությունում, իսկ Գյումրիի «Շիրակը» ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությունում: Վիճակահանությանը մասնակցելու համար, ինչպես «Ազգը» գրել է, Զվեյցարիա են մեկնել «Արարատ» ակումբի նախագահ Դմիտրի Մարտիրոսյանը եւ «Շիրակ» թիմի պես Սամվել Մանուկյանը: Երբ հայտնի դարձան մեր թիմերի մրցակիցները, վիճակահանությունը դեռ ամբողջովին չավարտված, Դմիտրի Մարտիրոսյանն իրեն հատուկ դատապարտությամբ եւ օդեւտվությամբ ֆաքսով որոշ մանրամասներ ուղարկեց «Արարատ» ակումբին, որն էլ իր հերթին սիրով տրամադրեց մեզ:

Ըստ վիճակահանության, «Արարատի» մրցակիցը Գավաթակիրների գավաթի խաղարկության նախնական փուլում լինելու է Լեհաստանի Կատովիցե քաղաքի ԳԿՍ թիմը, իսկ «Շիրակը» ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության նախնական փուլում մրցելու է Լեհաստանի մեկ այլ թիմի Լյուբլին քաղաքի «Զագլեբիեի» հետ: Մեր երկու թիմերն իրենց առաջին հանդիպումներն անցկացնելու են Լեհաստանում: «Զագլեբիե»-«Շիրակ» խաղը կայանալու է օգոստոսի 8-ին, իսկ ԳԿՍ-«Արարատ» հանդիպումը օգոստոսի 10-ին: Պատասխան հանդիպումները տեղի են ունենալու Երեւանում: «Շիրակը» մրցակցին ընդունելու է օգոստոսի 22-ին, իսկ «Արարատ»-ԳԿՍ խաղը կայանալու է օգոստոսի 24-ին:

Գավաթակիրների գավաթի հերթական խաղարկության նախնական փուլին թույլատրվել է մասնակցել 32 թիմ, որոնք ըստ վիճակահանության բաժանվել են զույգերի: Երկուական հանդիպումների արդյունքներով հաղթանակ տարած թիմերը 1/16-րդ եզրափակիչի ուղեղիր ձեռք կբերեն, որտեղ նրանց կմիանան լավագույն ռեյտինգ ունեցող 16 թիմերը: Ուշագրավ է, որ այդ 32 թիմերից 9-ը նախկին ԽՍՀՄ հանրապետությունների ներկայացուցիչներ են՝ Դոնեցկի «Շախյորը» (Ուկրաինա), «Լանչանան» (Էստոնիա), «ԳԱԺ Լիեպայան» (Լատվիա), Բաքվի «Նեֆչին» (Ադրբեջան), Բաթումի «Դինամոն» (Վրաստան), Մինսկի «Դինամո-93-ը» (Բելառուս), Վիլնյուսի «Ժալգիրիսը» (Լիտվա), Տիրասպոլի «Տիլիգուլը» (Մոլդովա) եւ Երեւանի «Արարատը»:

ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությունը, ինչպես միշտ, ավելի ներկայացուցչական է: Այստեղ նախնական փուլի մրցաշարին մասնակցելու են 64 թիմեր, որոնք նույնպես ըստ վիճակահանության բաժանվել են զույգերի: Չեմպիոնների լիգայի եւ Գավաթակիրների գավաթի խաղարկության համեմատ, ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությունը մեկ փուլով ավելին է եւ նախնական փուլում երկուական հանդիպումների արդյունքներով հաջողության հասած թիմերը 1/32-րդ եզրափակիչի ուղեղիր են ձեռք բերելու: ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության նախնական փուլին նախկին ԽՍՀՄ հանրապետություններից մասնակցում են. Ռիգայի «Սկոնտո» ու ՌԱՖ-ը (Լատվիա), Քիշնեւի «Զիմբրուլը» (Մոլդովա), Օդեսայի «Չերնոմորեցը» (Ուկրաինա), Թբիլիսիի «Դինամոն» ու Սամտրեդիայի հանանուն թիմը (Վրաստան), «Ինկարաս-Գրիֆասը» (Լիտվա), Տալլինների «Ֆլորան» (Էստոնիա), Մինսկի «Դինամոն» (Բելառուս), Գյանջայի «Քյափազը» (Ադրբեջան) եւ Գյումրիի «Շիրակը»: Ուշադրություն դարձրեք, որ Լատվիան եւ Վրաստանը ներկայացված են երկուական թիմով:

Չնայած վերջին տարիներին լեհական ֆուտբոլը ոչնչով աչքի չի ընկնում, սակայն թե համաշխարհային եւ թե եվրոպական չափանիշներով բարձր հեղինակություն ունի: Դա նշանակում է, որ մեր երկու թիմերին հանրապետության չեմպիոն Գյումրիի «Շիրակին» եւ գավաթակիր Երեւանի «Արարատին» լուրջ փորձություն է սպասում:

Նանոթացեք «Արարատի» մրցակցին.

GKS (Կատովիցե)

GKS (Gorniczy Klub Sportowy) նշանակում է Հանքագործների սպորտային ակումբ: ԳԿՍ (Կատովիցե) թիմը հիմնադրվել է 1964 թ: Կարճ ժամանակում այն մեծ հեղինակություն է ձեռք բերել Լեհաստանում: Արդեն հաջորդ մրցաշրջանում (1965 թ.) ԳԿՍ-ը Լեհաստանի առաջին խմբի մրցաշարում գրավեց առաջին տեղը եւ բարձրագույն խմբի ուղեգիր ձեռք բերեց: Թիմը Լեհաստանի առաջնություններում եւ գավաթի խաղարկություններում որոշակի հաջողությունների է հասել: Ահա արդյունքները.

Լեհաստանի գավաթի խաղարկություններ

1985	եզրափակիչի մասնակից
1986	գավաթակիր
1987	եզրափակիչի մասնակից
1990	եզրափակիչի մասնակից
1991	գավաթակիր
1993	գավաթակիր

Լեհաստանի բարձրագույն խմբի առաջնություններ

1985-86	5-րդ տեղ
1986-87	3-րդ տեղ
1987-88	2-րդ տեղ
1988-89	2-րդ տեղ
1989-90	3-րդ տեղ
1990-91	4-րդ տեղ
1991-92	2-րդ տեղ
1992-93	2-րդ տեղ
1993-94	2-րդ տեղ
1994-95	3-րդ տեղ

ԳԿՍ թիմը, սկսած 1987 թվից, ամեն տարի մասնակցել է եվրոպական ակումբային մրցաշարերից որեւէ մեկին գավաթակիրների գավաթի խաղարկությունը, կամ ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությունը: Իր 8 մասնակցություններին ընդգրկում թիմն ունեցել է 19 հանդիպում: Դա նշանակում է, որ հիմնականում առաջին փուլից հետո դուրս է մնացել: Չնայած դրան, Լեհաստանի թիմը հսկայական փորձ ունի եւ «Արարատի» համար լուրջ մրցակից է:

ԳԿՍ ակումբի «Պիկարսկիյ» մարզադաշտը տեղավորում է 14000 հանդիսական: Մոտ ապագայում վերակառուցվելուց հետո, այն կդառնա ժամանակակից մարզադաշտ:

ԳԿՍ ակումբի գույներն են դեղին-կանաչ-սեւ: Թիմի մարզաձեւերը դեղին եւ կանաչ գույնի են, կիսավարտիքներն սեւ ու կանաչ, զանկաղանները՝ սպիտակ:

ԳԿՍ-ի մասնակցությամբ հանդիպումների 80 տոկոսը ցուցադրվում են տեղի հեռուստատեսությամբ:

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախնական փուլի վիճակահանության արդյունքները

Գավաթակիրների գավաթ

«Տիլիգուլ» (Տիրասպոլ, Մոլդովա)-«Սիոն» (Զվեյցարիա)
«Սամսունգ» (Հունգարիա)-«Սիլեմ» (Մակեդոնիա)
«Տուրկու» (Ֆինլանդիա)-«Տեռուա» (Ալբանիա)
«Վադուց» (Լիխտենշտեյն)-«Հրադեկ» (Կրայովա, Չեխիա)
«Ապոել» (Նիկոսիա, Կիպրոս)-«Նեֆչի» (Բաքու)
«Վերեմեեվ» (Ուելս)-«Պեստոլուլ» (Պլոյեշտի, Ռումինիա)
«Վալլետա» (Մալթա)-«Ինստր» (Բրատիսլավա, Սլովակիա)
«Շախյոր» (Ուկրաինա)-«Լինֆիլդ» (Հս. Իռլանդիա)
«Ժալգիրիս» (Վիլնյուս, Լիտվա)-«Սուրա» (Սլովենիա)
ԳԿՍ (Կատովիցե, Լեհաստան)-«Արարատ» (Երեւան)
«Օբիլիկ» (Հարավսլավիա)-«Դինամո» (Բաքու, Վրաստան)
«Լոկոմոտիվ» (Սոֆիա, Բուլղարիա)-«Դերրի Սիթի» (Ֆար. կղզ.)
«Դինամո-93» (Մինսկ, Բելառուս)-«Սոլդե» (Նորվեգիա)
«Գրեվենմախեր» (Լյուքսեմբուրգ)-«Ռեյկյավիկ» (Իսլանդիա)
ԴԱԳ (Լիեպայա, Լատվիա)-«Լանչանա» (Էստոնիա)

ՈՒԵՖԱ-ի գավաթ

«Օրեբրո» (Շվեդիա)-«Ավենիր» (Լյուքսեմբուրգ)
«Վիկինգ» (Նորվեգիա)-ՏՊՎ (Տամպերե, Ֆինլանդիա)
«Վիծեւ» (Լոռ, Լեհաստան)-«Բանգոր Սիթի» (Ուելս)
«Լա Ակրանես» (Իսլանդիա)-«Շելբուռն» (Իռլանդիա)
«Սկոնտո» (Ռիգա, Լատվիա)-«Մարիբոր» (Բրանիկ, Սլովենիա)
«Շտուրմ» (Գրաց, Ավստրիա)-«Սլավիա» (Պրահա, Չեխիա)
«Լուգանո» (Շվեյցարիա)-«Ջոնես» (Լյուքսեմբուրգ)
ՆԿ (Պոսիյեկ, Խորվաթիա)-«Սլովան» (Բրատիսլավա, Սլովակիա)
«Օլիմպիակոս» (Հունաստան)-«Սլավիա» (Սոֆիա, Բուլղարիա)
«Ապոել» (Թել Ավիվ, Իսրայել)-«Զիմբրուլ» (Մոլդովա)
«Գալաթասարայ» (Թուրքիա)-«Սպարտա» (Պրահա, Չեխիա)
«Օմոնիա» (Նիկոսիա, Կիպրոս)-«Շլեմա» (Մալթա)
«Դինամո» (Թբիլիսի)-«Բոտեւ» (Պլովդիվ, Բուլղարիա)
«Ապոլոն» (Աբեռն, Հունաստան)-«Օլիմպիա» (Լյուբլյանա, Սլովենիա)
«Քսամֆս» (Շվեյցարիա)-«Ցրվենա Զվեզդա» (Հարավսլավիա)
«Չերնոմորեց» (Ուկրաինա)-«Հիբեռնիանս» (Մալթա)
«Մոսերվել» (Շոտլանդիա)-«Մուրա-47» (Ֆինլանդիա)
«Լիլեստրոմ» (Նորվեգիա)-«Ֆլորա» (Տալլինն, Էստոնիա)
«Բրոնդբյու» (Դանիա)-«Ինկարաս-Գրիֆաս» (Լիտվա)
«Հաֆնարֆյորդուր» (Իսլանդիա)-«Գրենավոն» (Հս. Իռլանդիա)
«Մալմյո» (Շվեդիա)-«Դունդալկ» (Իռլանդիա)
«Սիլկեբորգ» (Դանիա)-«Կրուսադերս (Հս. Իռլանդիա)
ՌԱՖ (Ռիգա, Լատվիա)-«Աֆան Լիդո» (Ուելս)
«Ռահիֆ Ռովերս» (Շոտլանդիա)-«Գոտու» (Ֆարերյան կղզ.)
«Ույոեցս Գոժա» (Հունգարիա)-«Գունայս Կաստրադա» (Սլովակիա)
«Ունիվերսիտաս» (Ռումինիա)-«Դինամո» (Մինսկ, Բելառուս)
«Ֆեներբախչե» (Թուրքիա)-«Պարտիզան» (Ալբանիա)
«Սամտրեդիա» (Վրաստան)-«Վարդար» (Մակեդոնիա)
«Աուստրիա» (Ավստրիա)-«Քյափազ» (Գյանջա)
«Ապոել» (Բեր Շեւա, Իսրայել)-«Տիրանա» (Ալբանիա)
«Զագլեբիե» (Լյուբլին, Լեհաստան)-«Շիրակ» (Գյումրի)
«Դինամո» (Բուխարեստ)-«Լեւսկի» (Սոֆիա, Բուլղարիա)

ԱՍՏՂԵՐԻ ՈՒՂԻՆ

Սերբ Սավիչը Բոսնիայից՝ Սերբիա...

ԳԵՎՈՐԳ ԱՍԻՊՈՎԱՆ
«Նեզանս, Թուսոֆա

Սերբիայի բասկետբոլի հավաքականի խաղացող Զորան Սավիչը ծնվել է Բոսնիայի 120 հազար բնակչություն ունեցող Զենիցա քաղաքում, որը գտնվում է Սարաեւոյից 60 կմ դեպի հյուսիս: Այս քաղաքում մեկ ամիս առաջ տեղի ունեցան Բոսնիայի առաջնության եզրափակիչ փուլի հանդիպումները: Զենիցայի 5 խաղացողներ այսօր հանդես են գալիս նախկին Հարավսլավիայի նորանկախ չորս հանրապետությունների հավաքականներում: Սավիչը խաղում է Սերբիայի հավաքականում, Ալիբեգովիչը Սլովենիայում, Ալիխոջիչն ու Մուսաբեգիչը Բոսնիայում, Մարիչը Խորվաթիայում: Զորան Սավիչը Զենիցա քաղաքում սկսեց բասկետբոլային առաջին քայլերը: 1989 թ-ին, երբ Հարավսլավիան դեռ չէր «ոչնչել», Սավիչը տեղափոխվեց Խորվաթիայի Սպլիտ քաղաք, որտեղ խաղում էին Մալկովիչն ու Տոնի Կուկոչը: Այս երկու տաղանդավոր բասկետբոլիստների հետ միասին, 1989 եւ 1991 թթ. Սավիչը դարձավ Եվրոպայի չեմպիոն: Ազգությամբ սերբ Սավիչը ծնվեց Բոսնիայում, որի երեք համայնքներից մեկը սերբերն են: «Ես ծնվել եմ Բոսնիայում, ծնողներս նույնպես, որոնք ազգությամբ սերբեր են: Կինս խորվաթ է: Երբ ղաստեղզմը սկսվեց Հարավսլավիայում, ես ընտրեցի Սերբիայի հավաքականը, բայց ես հարգում եմ նախկին Հարավսլավիայի բոլոր ազգերին», հայտարարում է Սավիչը: 205 սմ հասակ ունեցող եւ անհատական բարձր տեխնիկայով այս բացառիկ բասկետբոլիստը մարզական բնագավառում ամեն ինչ նվաճել է, բացառությամբ օլիմպիական մեդալի: Նա «Սպլիտ» թիմի հետ 1990 եւ 1991 թթ. դարձել է Եվրոպայի չեմպիոն, 1991-ին Հարավսլավիայի հավաքականի կազմում դարձյալ Եվրոպայի չեմպիոն, 1990-ին աշխարհի չեմպիոն: Սավիչը, հանդես գալով «Բարսելոնում», այժմ խաղում է Սպանիայի ՊԱՕԿ թիմում (Հունաստան): Նա Հարավսլավիայի (սերբերի) հավաքականում Սոֆիայում մասնակցեց Եվրոպայի առաջնության ընտրական փուլի խաղերին: Այսօր Սավիչը Հարավսլավիայի հավաքականում, դարձել է հեղինակավոր խաղացող, որը կարող է հաստատում երիտասարդների եւ տարեց խաղացողների միջեւ: Սավիչը երազում է մասնակցել 1996-ի Ատլանտայի օլիմպիական խաղերին եւ իր մարզական հարուստ հավաքածուին ավելացնել նաեւ օլիմպիական մեդալը: Սավիչը 1992-ին Բարսելոնում կարող էր տիրել արծաթե մեդալին, եթե հանձնաժողովը խաղալ Խորվաթիայի հավաքականում, բայց լինելով սերբ, չընդունեց խորվաթների առաջարկը: Բազմազգ եւ դաժան Բալկաններում, որ դաստիարակվեցին Բալկաններում, որ դաստիարակվեցին անվերջանալի են, մարզիկները մի օր արենանում են եւ տեսնում, որ իրենց երկիրը դարձել է ուրիշ դեղություն: Այնուամենայնիվ, ազգությունների այս ալեկոծված ծովում Սավիչը միշտ մնացել է սերբ:

Բաժինը վարում է
ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ

Մրցավարներն ընտրվեցին

Հայաստանի Հանրապետության ֆուտբոլի ֆեդերացիայի մրցավարական կոմիտեի վերջին նիստում ընտրվեցին տվյալ կոմիտեի 6 ամսվա կատարած աշխատանքներ, որոնք գնահատվեցին բավարար: Լավագույն Գերմանիայի Լյոնբերգ քաղաքում մեկնած մրցավարների գործուղման հաշվետվությունը, հաստատվեցին հուլիսի 9-ին անցկացված մրցավարների ֆիզիկական պատրաստականության նորմատիվների հանձնման ընթացքների արդյունքներ: Վերջիններիս շնորհիվ հաստատվեց 1995-96 թ. աշնան-գարնանային առաջնության եւ գավաթի խաղարկության հանդիպումներն սպասարկող մրցավարների ցանկը: Այդ դասվին արժանացել են ներքոհիշյալ 10 մրցավարներ.

1. Սլավա Ղազարյան
2. Գեւորգ Հովհաննիսյան
3. Կարեն Նալբանդյան
4. Պողոս Բալյան
5. Վոլոդյա Շահինյան
6. Անդրանիկ Բոնջուկյան
7. Արմեն Սանուչարյան
8. Հենրիկ Սիմոնյան
9. Վալերի Խաչատրյան
10. Վարդան Անդրեասյան

Վերոհիշյալ ցուցակից դուրս են մնացել մի քանի փորձառու մրցավարներ: Ֆեդերացիայի մրցավարական կոմիտեն նրանց մեկ ամիս ժամանակ է տվել, որպեսզի վերանայեն սահմանված նորմատիվները: Հակառակ դեպքում նրանք կզրկվեն բարձրագույն խմբում նույնիսկ եզրային մրցավար լինելու իրավունքից:

ՇԱԽՄԱՏ

Կանայք ուժեղ են

Պրահայում տեղի ունեցող շախմատի կանանց աշխարհի հավաքականի եւ տղամարդ անվանի վետերան շախմատիստների մրցախաղ մրցաշարում տեղի է ունեցել յոթ տուր: Գեղեցիկ սեռի ներկայացուցիչները հաշվի մեջ էլ ավելի են առաջ անցել: Մրցաշարի եզրափակիչ երեք տուրից առաջ կանայք առջեւում են 20-15 հաշվով: Հիշեցնենք, որ վետերան շախմատիստների հավաքականում խաղում են այն պիսի անվանի գրոսմայստերներ, ինչպիսիք են աշխարհի նախկին չեմպիոններ Վասիլի Սմիսլովն ու Բորիս Սպասկին, միջազգային գրոսմայստերներ Վիկտոր Կորչնոյը, Լայոշ Պորտիշը, Վլատիմիլ Հորսը: Կանանց հրաշալի թիմը կազմում են Հուդիթ եւ Ժուժա Պոլգար քույրերը (Հունգարիա), աշխարհի չեմպիոնուհի Սե Չժունը (Չինաստան), Նանա Իոսելիանին (Վրաստան), Պիա Կրամլինգը (Շվեդիա):

digitised by A.R.A.R.@

ՄԵԶ

Օրվա հետքերով

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Ադրբեջանը շարունակում է անընդունելի պահանջներ ներկայացնել

«Մինսկի խմբի գործունեությունը իր աշխատանքը կարող է սկսել հենց այսօր, քանի դեռ ներկայումս դրա համար ստեղծված են բոլոր նախադրյալները: Սակայն խմբի գործունեությունը, ինչպես նաև միջազգային անվտանգության ուժերի տեղաբաշխումը վաստակն բնդունում է Ադրբեջանը անընդունելի պահանջներ ներկայացնելով թե Ղարաբաղին, և թե միջնորդներին: Այս մասին Ռեհանմանիտում լրագրողներին ասաց ԼՂՀ արտաքին գործոց նախարարության մամլոյի քարտուղար Վիգեն Աֆիյանը:

Դրա խոչընդոտ Բաքվի անընդունելի պահանջները բանակցային գործընթացում ադրեգրեսիվ է, անդրադառնում ԵԱՀԿ շրջանակներում կարգավորման որոնումների ընդունման հնարավորության, մասնավորապես հակամարտության գոտում միջազգային անվտանգության ուժերի տեղաբաշխման վրա: Պատճառելով Բաքուն նաև և առաջ դրահանջում է խաղաղապահի գործեր կենտրոնացնել Ադրբեջանի և Հայաստանի միջև, ինչը Ա.Աֆիյանի կարծիքով չի կարող ընդունվել Ղարաբաղի կողմից, քանի որ դրանով Ադրբեջանը ձգտում է մեկուսացնել ԼՂՀ-ն Հայաստանից: Ադրբեջանական կողմը վարում է հանգիստ միջոցներին, որ նախ և առաջ դեմ է վերանայվի Լաչինի մարդասիրական միջանցքը: Պատճառելով Ստեփանակերտ տեղեկատվության է հաղորդում նման դիրքորոշումը: Նշելով, որ Լաչինը չի գտնվում ճակատային գոտում և այնտեղ հակառակ կողմի տարածման կարիք չկա դրանց բացակայության դեպքում: Ա.Աֆիյանը նաև նշեց, որ Լաչինի միջանցքը ԼՂՀ-ն արտաքին աշխարհին կապող միակ օղակն է և դրա վերանայումը նոր դժվարություն կստեղծի ԼՂՀ բնակչության սնունդաթերքով ապահովելու հարցում:

Մինչև Մինսկի խմբի գործարքը դասական Բաքուն, մանրամասն քարտուղարի խոսքերով, դահանջում է դուրս բերել դարաբաղյան զորամասերը բոլոր տարածքներից: Դա միանգամայն անհնարելի դահանջ է, ասաց Ս.Աֆիյանը: Քանի որ Ղարաբաղի կողմից նման որոշում ընդունելու դեպքում ադրբեջանական բանակը կարող է գրավել ճակատային լայնագույն դիրքեր, իսկ այնուհետև վերսկսել դասեռազմական գործողություններ Ղարաբաղի հայության դեմ:

Մամուլի քարտուղարը նշեց, որ դարաբաղյան կողմն իր հերթին դահանջում է տարածքային զորքերը տեղաբաշխել հակամարտող կողմերի տիման գծի երկայնքով: «ԼՂՀ-ն դեմ է մարտական գործողությունների չվերսկսման կապակցությամբ հաշվի չեն ասնում Ադրբեջանի և միջազգային ընկերակցության կողմից: Հաստատելն երաշխավորված դեմ է լինի հաերադեսության բնակչության անվտանգությունը: Բացի այդ, բանակցությունների բոլոր փուլերում դեմ է դահանջվի երկու կողմերի տանքերի հավասարության սկզբունքը, իսկ վերջինս բոլոր հարցերը անհիրաժեշտ է կարգավորել ընդհանուր համաձայնությամբ», ասաց Ս. Աֆիյանը:

Մամուլի քարտուղարը տեղեկացրեց նաև, որ ինչպես Մինսկի խմբի դեկավարությունը, այնպես էլ Մինսկի խորհրդաժողովի համանախագահները բավարարվածությամբ են ընդունում ԼՂՀ դիրքորոշումը հանգցային բոլոր հարցերում: Ն. Գ.

ԹՈՍԼԻՍ

ՆԱՏՕ-ի հարվածից հետո սերբերը հրեատակոծեցին ՄԱԿ-ի ուժերի շտաբը

ԲԵԼԳՐԱԴ, 12 ՀՈՒԼԻՍ, ՌԻԱ ՆՈՎՈՍՏԻ- Երեքշաբթի օրը ՆԱՏՕ-ի օդուժը բոսնիացի սերբերի տանկերի շարասյանը նոր հարված է հասցրել մահմեդականների Սրեբրենիցա քաղաքի մոտակայքում: Հարձակմանը մասնակցում էին F-16 տիպի երեք ռազմական երկու օդանավ, որոնց արձակած չորս հրթիռներից մեկը խոցել է սերբական մի տանկ, իսկ առնվազն մեկը դիպել մահմեդականների բիրախներին. հաղորդում են բոսնիացի սերբերի վարչական կենտրոն Պալե քաղաքի լավատեղյակ աղբյուրներ: Պալեի հեռուստատեսության հաղորդման համաձայն, դրանից հետո տանկերը մեկ են բաղամ, ուր բնակիչներ խուճապահար թողել են իրենց տները:

Ժամը 14:30-ին ձեռնարկված առաջին օդային գրոհից հետո բոսնիացի սերբերի հրեատակին զենքերը ձեռք է Սարաեւոյում ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի շտաբը: «Դաղարյան սաղավարտների» ներկայացուցչի խոսքերով, երկու ակ է դադարել շտաբի շենքի մոտ, որից հետո անձնակազմն ապաստան է եղել բանկերում ռմբարձակումներից: Բնակիչից վիրավորվել է մեկ աշխատակից:

Եելցինը «խաղաղա՞ր» վերցրեց

ՄՈՍԿՎԱ, 12 ՀՈՒԼԻՍ, ՌՆԱՐԲ-ԻՏԱՐ- Բորիս Եելցինի հիվանդանոց գնալը կարող է կապված լինել անվտանգության դաշնակցային ծառայության ղեկավարի դաշտոնի համար նրա մեծաքանակ տարբեր խմբավորումների դեմ մի շարք բարձրաստիճան անձիք, որոնք կուզենային այդ դաշտոնում տեսնել իրենց մարդուն: Դրա հետևանքով նախագահը որոշել է ժամանակավորապես «խաղաղաղար» վերցնել:

OFFICE SPACE WANTED

USAID/Caucasus, Yerevan is looking for a seven room free standing house to rent in the Yerevan Aigedzor area. Preference will be given to houses in new condition with no repairs needed. Interested parties should call Armen Karapetian at 26-34-97 or visit the Executive Office of USAID, 10 Aigedzor Street, from 10-5 pm.

* *

ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ՏՈՒՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալությունը ցանկանում է վարձել առնվազն յոթ սենյակ ունեցող առանձնատուն Երեւանի Այգեձոր բաղամասում: Նախապատվությունը կտրվի նոր վերանորոգված տներին: Խնդրվում է զանգահարել Արմեն Կարապետյանին 26-34-97 հեռախոսահամարով կամ այցելել գրասենյակ Այգեձորի 10 հասցեով, աշխատանքային օրերին ժ. 10-17-ը:

ՏԵՍՈՒՄՆԵՐ

Վ. Շումեյկոն ժամանեց Թբիլիսի

ԹԲԻԼԻՍԻ, 12 ՀՈՒԼԻՍ, ՍՆԱՐԲԻՍԱ ՊՐԵՍ- Երեկ դաշտոնական այցով Թբիլիսի ժամանեց ՌԴ Դաշնությունն խորհրդի խոսնակ Վլադիմիր Շումեյկոն: Նա կհանդիպի Վրաստանի ղեկավար է դուստ Շեւարդնաձեի, խորհրդարանի նախագահ Վախթանգ Գոգուաձեի, վարչապետ Օրար Պագացիայի հետ: Բանակցությունների հիմնական թեման երկկողմ միջպետական ու միջխորհրդարանային հարաբերությունների զարգացման խնդիրներն են: Շումեյկոն մտադիր է նաեւ մասնակցել Թբիլիսիում հուլիսի 13-15-ը անցկացվող մշակույթի գործիչների միջազգային համաժողովին:

Թուրք-ադրբեջանական բանկ Բաքվում

ԲԱՔՈՒ, 12 ՀՈՒԼԻՍ, ՍՆԱՐԲԻՍԱ ՊՐԵՍ ԽՍԲԱՐ ՍԵՐՎԻՍ- Հուլիսի 11-ին Բաքվում բացվեց հաստատեղ թուրք-ադրբեջանական «Ազերթյուրք» առեւտրային բանկը: Մեկ միլիոն դոլար կանոնադրական կապիտալ ունեցող նոր ֆինանսական կառույցի հիմնադիրներն են ադրբեջանական «Ազոդոդոմբանկը» եւ թուրքական «Զիրաաթ բանքասին»:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՀՈՂԱՍԱՍ-ԱՅԳԻ
500 քմ տարածությամբ.
Հարաղբյուրի
2-րդ զանգվածում:
Զանգահարել
58-18-41
հեռախոսահամարով:

ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպությունը առաջարկում է ֆիննական բարձրորակ թուղթ խեմոմների, ֆաքսերի եւ այլ նպատակների համար, դիպլոմային աշխատանքների բլանկներ: Վճարումը կանխիկ եւ փոխանցումով: Նվազագույն խանակությունը 1 տուփ (500 թերթ), 4500դրամ

Հեռախոսներ՝
524868, 583996

ԱՆԿԱՐԱ

Թուրքական վարկ՝ Թուրքմենստանին

Թուրքական հեռուստատեսության հաղորդման համաձայն, դաշտոնական այցով Թուրքմենստանում էր գտնվում Թուրքիայի արտգործնախարար Էրդալ Ինոնյուն: Նա հանդիպումներ ունեցավ նախագահ Սապարմուրատ Նիյազովի և հանրապետության մյուս դեկավարների հետ: Անկարայի Էսենբոգա օդանավակայանում Էրդալ Ինոնյուն, անդրադառնալով այցի արդյունքներին, հայտարարեց. «Այցը շատ օգտակար էր. և Թուրքմենստանում մեծ հետաքրքրություն առաջացրեց: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին երկկողմ հարաբերությունների զարգացման և բարելավման ուղեւորատնտեսական հարաբերությունների առնչվող մի շարք խնդիրներ: Աշգաբատում ստորագրվեցին Թուրքմենստանում 1.5 միլիարդ դոլարի ներդրումներ կատարելու և 200 միլիոն դոլարի վարկ հատկացնելու վերաբերյալ արձանագրությունները»:

Այնուհետև Ինոնյուն ասաց. «Մեր հանդիպումների ընթացքում առանձնակի հետաքրքրությամբ քննարկվեցին Թուրքմենստանի բնական գազի հարուստ պաշարները Թուրքիայի տարածքով Եվրոպա հասցնելու ծրագրի մանրամասները»:

ԳՐԻԳՈՐ ՉԱՐԲԵՅԱՆ

«ԱՐԱՅ» ֆիրման

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է

"Panasonic" ֆիրմայի հեռախոսային կապի գերժամանակակից էլեկտրոնային համակարգեր

1. KX – T 30810B *միչև 3 բաղադրային հեռախոսային գիծ և միչև 8 ներքին աբոնենտ*
2. KX – T 6160B *միչև 6 բաղադրային հեռախոսային գիծ, և միչև 16 ներքին աբոնենտ*
3. KX – T 12321D *միչև 12 բաղադրային հեռախոսային գիծ և միչև 32 ներքին աբոնենտ*

ՄԵՐ ԲԱՇԽՐՈՒԱԿ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ԿՈՂՆԵՆ ՁԵՋ ՍԵՂՄ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԴՐԵԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՎԵՐԱՍԱՐԱՎՈՐԵԼ ԱՅՆ ԸՍՏ ՁԵՐ ՊԱՀԱՆՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՏԱՆ 1 ՏԱՐՎԱ ԵՐԱՇԽԻՔ

Մեր հասցեն Հանձախոսներով

Ավանուրյան պողոտա 9
25-37-50, 25-10-87, 25-43-87

CEGEMA

Հայաստանի Հանրապետության Ազգաբնակչության ազգային եւ ֆեդերատիվ պետական ինստիտուտ ԺԻԱ բնակիչների հանձնաժողովի ենթակայությամբ գործում է Հայաստանի մենեջմենտի կենտրոն ՍԵՄԱ, որը գործում է 1991 թ. Ֆինանսների նպատակն է ապահովել բարձրորակ մասնագետներ տնտեսական մասնագիտությունների ոլորտում աշխատելու համար: ՍԵՄԱ կենտրոնը կազմակերպվել է 1995-96 թթ. ուսումնական տարվա ընթացքում: Ուսանողները ընդունվում են 12 փոքրաթիվ, բարամանյարդ մեկ տարի տեւողությամբ, մեկ տարի կտրվածքով:

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

- Հարկային մասնագիտություն
- Ֆինանսներ եւ նոր կազմակերպություններ
- Ֆինանսների մենեջմենթ եւ գնահատում
- Խմբագրային մենեջմենթ
- Ֆինանսների իրավունք
- Հաշվապահություն
- Աղյուսագրական առեւտրային գործ
- Վաճառք եւ բաշխում
- Մարկետինգ
- Միջազգային առեւտուր
- Ֆինանսներ-Ֆինանսական վերլուծություն, դրամական հոսքերի տեսություն
- Բիզնես պլան

Ունկնդիրներ կարող են հանձնվել միայն հանձնաժողովի որոշմամբ, ինչպես նաև բոլոր վճարները հայտագրվում: Դասընթացների տեւողությունը վերջանալուց հետո ունկնդիրներին տրվում են Իրավասության մասնագիտական վկայականներ: ՍԵՄԱ կենտրոնը Հայ տնտեսագետների միությունն է: ՍԵՄԱ կենտրոնը կարող է կազմակերպել դասընթացներ ինչպես նաև ստանձնել Հանձնաժողովի ուսանողներին գործնական դասընթացներ: ՍԵՄԱ կենտրոնը կարող է կազմակերպել դասընթացներ ինչպես նաև ստանձնել Հանձնաժողովի ուսանողներին գործնական դասընթացներ: Ուսանողների կարգավիճակը եւ դասընթացների կարգը հանձնաժողովի կողմից հնարավոր է հանձնարարել եւ կարգավորել: Դասընթացներին մասնակցելու համար ՍԵՄԱ կենտրոնը կարող է նշանակել իրեն հարգ եւ հանձնարարել դասընթացներ:

Տեղեկություններին համար զանգահարել 56-51-94 հեռախոսով:

ՀԱՅԱՍՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻ
ՀՀ ԱՌԵՎՏՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱԼԱՏ

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23, Աբովյան 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1899 Տպաքանակը 7000 Ստորագրված է տպագրության 12.07.1995 Գինը 40 դրամ

digitised by A.R.A.R.@